ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ (1915 – 1923 թթ.) ԸՍՏ ԱԿԱՆԱՏԵՍ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ

Հայոց ցեղասպանության ընթացքում, երբ Օսմանյան կայսրության գրեթե ողջ տարածքով մեկ տեղի էին ունենում հայերի ձերբակալություններ, աներևակայելի դաժանություններ, տեղահանություններ ու կոտորածներ Էրզրումում, Դյորտյոլում, Զեյթունում և շրջակայքում, արյունալի ընդհարումներ Յոզգատում, Շատախում, Վանում, Բիթլիսում, Մուշում, բռնություններ, թալան, սպանություններ Ակնում և ամբողջ Փոքր Հայքում՝ ժողովրդի վիճակը, իրոք, մղձավանջային էր: Սակայն ողբերգական այդ օրերին հայ ժողովրդի հոգում վերազարթնեց դարերի խորքից ժառանգաբար արյան հետ եկող «Մահ իմացեալը» ստրուկ կյանքից նախընտրելու և բռնությանը միահամուռ ուժով դիմադրելու հերոսացման իր խիզախ ոգին:

Առաջին աշխարհամարտի հենց սկզբից Յոզգատը, որն ուներ 48 հայկական գյուղեր՝ շուրջ 75 հազար հայ բնակչությամբ, դիմադրում է Օսմանյան կայսրության կազմակերպած զորահավաքին, զինահավաքին և բռնագաղթին[1]: Այդ մասին են վկայել նաև մեր յոզգատցի ականատես վերապրողներ Հակոբ Փափազյանը (ծնվ. 1891 թ.), Մեսրոպ Մեսրոպյանը (ծնվ. 1900 թ.), Հովհաննես Վարժապետյանը (ծնվ. 1901 թ.), Սրբուհի Գալթաքյանը (ծնվ. 1902 թ.), Արշակուհի Պետրոսյանը (ծնվ. 1903 թ.), Բարունակ Փափազյանը (ծնվ. 1906 թ.), Վերոնիկա Բերբերյանը (ծնվ. 1907 թ.), Հովակիմ Կարաքեքեջյանը (ծնվ. 1907 թ.), Անուշ Թոփալյանը (ծնվ. 1910 թ.) և Հերմինե Տեր Ողորմիաճյանը (ծնվ. 1912 թ.)[2]:

1915 թ. ապրիլին Յոզգատի շրջանում թուրք ոստիկաններն իսլամ այլազան ցեղերի, տգետ ու մոլեռանդ ամբոխի հետ շրջապատում են Յոզգատի Բուրուն Ղըշլա, Էյլենջե և Գումգույու գյուղերը, որոնք ունեին շուրջ 8 հազար հայ բնակչություն: Գոյամարտի ընդունակ տարրը հավաքվում է Գումգույում, որտեղ ապաստան էին գտել նաև Քիլլեր և Բեռհրենկ գյուղերի ոչնչացումից փրկված, բնավեր դարձած գյուղական բնակիչներն իրենց մարտական ուժերով, որոնց ղեկավարում էին Աբի-

---

[1] *Պատմագիրք Յոզգատի և շրջակայից (Գամիրք) հայոց, խմբ. Արմեն Դարյան, Անդրանիկ Երկանյան, Բեյրութ, 1988, էջ 775:*

[2] *Վ. Սվազլյան. Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ (այսուհետև՝ Սվազլյան – Սվ., Վկայություն – Վկ.), Երևան, 2011 (Սվ., Վկ. 172–180, էջ 355–375):*

սողում Առաքելյանն ու Հաջիբեյ Փափազյանը: Նրանք կազմում են մարտական խմբեր և կազմակերպում ինքնապաշտպանությունը:

Զեքիա բեյն իր ջարդարարներով հարձակվում է հայոց դիրքերի վրա, բայց գումգույուցիները՝ կին, թե՝ տղամարդ, «հուռա» գոռալով, իրենց ձեռնառումբերով հանկարծակիի են բերում նրանց: Առաջին իսկ համազարկից թշնամու 35 դիակ է փռվում գետնին, այդ թվում նաև՝ Զեքիա բեյը: Խուժանն այդ տեսնելով՝ լքում է ճակատը և փախչում:

Յոզդատի հայության դահիճ Ղասըմ բեյը, այդ պարտությունից կատաղած՝ հեռագրով կանոնավոր զորք է պահանջում թուրքական չորրորդ բանակի հրամանատարից՝ ասելով. «Հայերը այդ ուժով օր մը կարող են քաղաքի վրա քալել և զայն գրավել»[3]:

Թուրքական կառավարության հրամանով Ղասըմ բեյի կանոնավոր բանակը թնդանոթներով ու փոխվրեժով լցված ամբոխով սկսում է ռմբակոծել Գումգույուի հայերի տուն-դիրքերը: Այդ թոհուբոհից հազիվ 10 հոգի է ազատվում, որոնք Հաջի Փափազյանի գլխավորությամբ բարձրանում են Ագդաղի անառիկ անտառները և միանում գոյամարտող երիտասարդ չաթցիներին[4]:

Թուրքական կառավարության կազմակերպած զորահավաքի, զինահավաքի, տեղահանության և կոտորածների ահավոր լուրերն արդեն հասել էին նաև Յոզդատի Չաթ գյուղի բնակիչներին, որոնք նույնպես որոշել էին ընդդիմանալ և հայ երիտասարդներին թուրքական բանակ չուղարկել, այլ՝ բարձրանալ Ագդաղի լեռը և զենքով պաշտպանել իրենց համագյուղացիների պատիվն ու ապրելու իրավունքը:

Թշնամու գերազանց ուժերի դեմ մարտնչելու համար Ագդաղի հերոսներն ընտրել էին պարտիզանական պայքարի ձևը, որը հնարավորություն էր ստեղծում ծանր հարվածներ հասցնել թշնամուն, հյուծել նրա շարքերն ու միաժամանակ ավելացնել հայկական մարտական խմբերի պաշտպանական և պարենային հնարավորությունները[5]:

1915 թ. ապրիլի 30-ին Յոզդատի դահիճ Ղասըմ բեյը 100 հեծյալով մտնում է Չաթ գյուղ, հրամայում է հայ երիտասարդներին զորակոչել և զենքերը հանձնել: Չաթցիները պատասխանում են. «Զենք՝ չունե՛նք, իսկ երիտասարդները լեռն են բարձրացել»[6]: Ղասըմ բեյը երկու ոստիկան է ուղարկում Ագդաղ, որ խուզարկեն, բայց ապստամբ չաթցիները նրանց գերեվարում են և, ձիերի վրա կապելով, բաց թողնում դեպի թուրքական կողմը: Այդ լսելով՝ կառավարությունը խուզարկության նպատակով 200 ոստիկան է ուղարկում Չաթ գյուղ և 80 երևելիների ձեռնակապերով տա-

---

[3] *Մ. Ավետյան. Հայ ազատագրական ազգային հիսնամյա (1870–1920) հուշամատյան և Զոր. Անդրանիկ (Վերլուծական հայեցողությամբ և վավերական տվյալներով), Փարիզ, 1954, էջ 299:*

[4] *Նույն տեղում, էջ 300:*

[5] *Պատմագիրք Յոզդատի և շրջակայից (Գամիրք) հայոց, էջ 779:*

[6] *Նույն տեղում:*

նում են Բողազլյան, իսկ գյուղը ենթարկվում է թալանի ու ավերի: Հայ երևելիների մեջ էին նաև Չաթ գյուղի բնակիչ Սամվել Ինճեյանը՝ հոր հետ:

Լոս Անջելեսի «Արարատ» ծերանոցի բնակիչ Բարունակ Փափազյանը (ծնվ. 1906 թ., Յոզդատ) 2001 թ. աչքի լույսի պես պահած իր սիրելի հերոս Սամվելի նկարը ցույց է տվել ինձ ու պատմել. «Չաթ գյուղը մեր գյուղից մեկուկես ժամ հեռու էր: Չաթ գյուղի տղամարդկանց ալ ձեռքերը կապկպած կտանին ձորը սպանելու: Հայր ու տղայի մը ձեռքերն ալ իրար կապված կըլլան: Տղան՝ Սամվելը, կըսե. «Հայրի՛կ, ես փախչիմ պիտի, կացինով չսպանվիմ, գնդակով թող մեռնիմ» (Սվ., Վկ. 350, էջ 545–546): Սամվելն իր մոտ եղած դանակով կտրում է ձեռնակապի պարանը և, փախչելով, բարձրանում Ագդաղ: Նրա օրինակին հետևում են շատերը:

Լեռան վրա դիրքավորված հայ քաջերի խմբապետ Ադամը հրահանգում է՝ ձորերից ու քարայրներից հավաքել չաթցի փախստականներին և օգնել նրանց բարձրանալ Ագդաղ, որը դառնում է պայքարի կենտրոն: Այնտեղ էին հավաքվել ավելի քան 1.000 հայորդիներ, որոնք ուխտել էին դիմադրել թշնամուն ու վրեժ լուծել: Նրանց օրինակին հետևում են նաև Յոզդատի, Սամսունի, Բաֆրայի հայերը: Լեռնականներն իրենց վրա հարձակվող 200 թուրք զինվորներին սպանում են և հագնում նրանց համազգեստները, որ թուրքերից չտարբերվեն:

Ագդաղի գոյամարտում Սամվելն աչքի է ընկնում իր արտասովոր քաջությամբ. նա ծառայել էր թուրքական բանակում և վարժ նշանառու էր, կռվողներին ուսուցանում էր ռազմավարության գաղտնիքները: Նրա խմբում էր նաև Գյուլիզարը՝ իր խիզախ ու նվիրյալ կինը[7]: Ի դեպ, Ագդաղում շատ կանայք իրենց ամուսինների հետ կողք կողքի կռվել են՝ բարձր պահելով հայ կնոջ պատիվն ու արժանապատվությունը:

Ադամի, Սամվելի, Գյուլբենկի, Հաջիի, Զիլ Օհանի, Արթինի խմբերից բացի, Ագդաղ լեռան վրա կռվում էր նաև թենթիլցի Մանուկի խումբը:

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից Յոզդատի Թենթիլ գյուղը ևս - դիմադրում է թուրք ջարդարարներին: Երբ Թենթիլ գյուղի հայ երիտասարդներին պարտադրում են թուրքական բանակ զորակոչվել, գյուղացիները վճռում են դիմադրել: 4.000 մեծ ու փոքր թենթիլցիներ իրենց պարենով և եղած զինամթերքով բարձրանում են լեռան հսկա քարանձավը, որը ոչ միայն վտանգավոր դիրք ուներ, այլև լի էր չղջիկներով ու սողուններով, իսկ ջրի աղբյուրը դրսում էր: Թենթիլն ուներ 700 երիտասարդ, բայց հազիվ 200-ն էր զինված: Թուրքական կառավարությունը նրանց դեմ 2.000-ից ավելի կանոնավոր զորք է ուղարկում, որին միանում է նաև մոլեռանդ ամբոխը: Նրանք պաշարում են քարանձավը և դրսում գտնվող ջրի աղբյուրը: Ժողովուրդը զրկվում է ջրից: Սկսվում է անհավասար կռիվ: Կռվում էին նաև կանայք ու աղջիկները: Հայերն ունենում են 135 զոհ, իսկ թուրքերը՝ երեք անգամ

[7] *Մ. Ավետյան. նշվ. աշխ., էջ 310:*

ավելի: Խմբապետ Մանուկը փորձում է ճեղքել պաշարման օղակը և իր խմբով բարձրանալ Ագդաղ: Ոմանք գերեվարվում են, ոմանք էլ՝ նահատակվում: Միայն 20 հոգու է հաջողվում բարձրանալ Ագդաղի գագաթն ու միանալ այնտեղ ապաստանած մարտիկներին՝ ստեղծելով վրեժխնդիր «Քաջարիների» գունդը…

Ագդաղի հերոսներից էր նաև խիզախ ու աննկուն խմբապետ Հաջիբեյ Փափազյանը: Նա էլ էր ծառայել թուրքական բանակում և լավ նշանառու էր: Հաջիբեյը ցանկանում էր իր խմբով անցնել Կովկաս և միանալ ռուսական բանակին, բայց անընդհատ վրա էին հասնում թուրք տարբեր ջարդարարներ, և նա իր խմբով հաջողությամբ վարում էր անհավասար մարտեր: Երբ հունական Ղարափիր գյուղում թուրքերը նրանց շրջապատում են, նա իր ընկերներով 35 թուրք է ոչնչացնում և կրկին բարձրանում Ագդաղ: Հաջիբեյ Փափազյանն իր 40 մարտիկներին է միացնում Դելի Փափազի, Աբրահամի, Զիլ Օհանի, Գարա Խաչիկի խմբերը: Նրանցից շատերը հունական Թերմե քաղաքի ծովեզերքից առագաստանավով հասնում են Տրապիզոն, կացության մասին պատմում են ռուսական հրամանատարությանը, և վերջիններիս ուղարկած զորքն ազատագրում է Թերմե քաղաքը:

Չաթի հայության մարտական խմբերը 1917 թ. գարնանը մոտենում են ռուսական բանակի գրաված սահմանագծին, սակայն թուրք դահիճները դեռ շրջում էին հայրենի լեռներում: Նրանց ոչնչացնելու պարտքի գիտակցությունը մարտերում հերոսի կոչման արժանացած Սամվել Ինճեյանին ստիպում է մնալ թշնամու կրակի օղակում և շարունակել զինված պայքարը: Նա ասում է. «Հոս թաղուած են մեր հոգիներուն կեսը, մեր սիրելիներուն մեծ մասը: Տակավին կշրջին բյուրավոր դահիճներ: Մենք ո՞ւր կփախինք այս ահեղ պարտքեն»[8]:

Յոզդատի հայկական մարտական խմբերը Առաջին աշխարհամարտի սկզբից մինչև 1918 թ. զինադադարը կռվել են հայրենի տարածքներում՝ Ագդաղի, Պոնտոսի, Տավրոսի լեռներում ու ձորերում: Նրանք չորս տարի շարունակ մարտնչել են թուրքական զինված ուժերի դեմ՝ ոչնչացնելով թշնամուն: Յոզդատի խիզախ մարտիկները նշանակալի դեր են ունեցել հայ ժողովրդի գոյատևման համար մղված հերոսական պայքարում:

Առաջին աշխարհամարտից հետո Ագդաղի արդեն նվազած հայկական մարտական խմբերի շուրջ 400 կռվողներ, խմբապետ Մանուկի գլխավորությամբ, թուրքերի դեմ պայքար մղելով, հասնում են մինչև Երզնկա ու միանում Զորավար Անդրանիկի բանակին: Ագդաղի հերոսներից շատերը, 5–6 օր նավարկելով, անցնում են Ռուսաստան[9], իսկ խմբապետ Սամվելը, իր կտրիճներով Տավրոսյան լեռներում

---

[8] *Պատմագիրք Յոզդատի և շրջակայից (Գամիրք) հայոց, էջ 780–781:*

[9] *Մ. Գ. Ճիզմեճյան. Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցությանց (1890–1925), Ֆրեզնո, 1930, էջ 312:*

թուրք ջարդարարներին ոչնչացնելով, 1919 թ. հասնում է Կիլիկիա՝ օգնելու կիլիկիահայերի անկախության համար մղվող պայքարին:

Եթե Ագդաղի քառամյա գոյամարտն իր լայնածավալ ընդգրկումով, բազմաթիվ մարտական խմբերի և ժողովրդական զանգվածների մասնակցությամբ թուրքական կառավարության զորքերի դեմ կենաց ու մահվան պայքար է մղել, ապա Վանի ինքնապաշտպանական հերոսամարտն իր ռազմավարական կազմակերպվածությամբ առանձնապես օրինակելի դարձրեց խիզախ վանեցիների սխրանքը, որը սկիզբ էր առել շատախցիների զինված ինքնապաշտպանությամբ:

Այդ մասին է վկայել շատախցի ականատես վերապրող Անդրեաս Գյուլանյանը (ծնվ. 1907 թ.). «Դեռ 1914 թ. ուշ աշնանից, երբ Թուրքիան մտավ պատերազմի մեջ, գորդոններ՝ պահակակետեր տեղադրեց Շատախի մեծ գյուղերում, այդ թվում նաև Սևտկին գյուղում» (Սվ., Վկ. 26, էջ 119): Շատախցիները, կանխազգալով վերահաս վտանգը, սկսեցին զենքեր գնել, որ պաշտպանվեն: Շատախի կառավարիչ Մեյթի Բեյը՝ կասկածելով, կալանավորում է Շատախի հայկական դպրոցների տեսուչ Հովսեփ Չոլոյանին: Խուզարկության ժամանակ նրա գրպանում հայտնաբերվում է զենք ունեցող շատախցիների ցուցակը: Լսելով այդ մասին՝ հայերը Շատախի Թաղ կենտրոնում ժողով են հրավիրում և որոշում ստեղծել ինքնապաշտպանական զինվորական մարմին՝ նպատակ ունենալով ոչնչացնել Սևտկին գյուղի թուրքական երկու պահակակետերը, քանի որ այդտեղից ճանապարհը Ոստանով և Հայոց Ձորով տանում էր դեպի Վան: Շատախցիները թուրքական պահակախմբի ղեկավար Բայրի Օնբաշիից պահանջում են հեռանալ, բայց թուրքերը կրակ են բացում: Սկսվում է երկկողմ հրաձգությունը: «Մենք՝ մորս հետ սարում քարի տակից տեսնում էինք, – շարունակել է նույն ականատես վերապրողը: – Քառասուն կրակոց եղավ: Ամեն ինչ դադարեց: Երկինքը ամպոտ էր, բայց ցուրտ չէր: Սպանվել էր Բայրի Օնբաշին, իր օգնականն ու իրենց ասկյարները: Իջևանատան պատուհանից թուրքերը գցում են ներքև իրենց հրացանները և ձեռքերը վեր բարձրացրած անձնատուր են լինում» (Սվ., Վկ. 26, էջ 119):

Շատախցիների հերոսական գոյամարտի լուրը հասնում է Վան: Վանի նահանգապետ Զևդեթ փաշան կանչում է հայ նշանավոր գործիչ, Վանի ղեկավար, ծնունդով դարաբաղցի պարոն Իշխանին (Նիկողայոս Միքայելյան) և հրամայում, որ նա գնա ու հանդարտեցնի ըմբոստ շատախցիներին: Սակայն դեռ տեղ չհասած, Հայոց Ձորի Հիրճ գյուղում Իշխանին ուղեկցող թուրք ոստիկանները գիշերով նրան ու նրա ընկերներին սպանում են և թաղում հողի մեջ:

Այդ նույն օրը Զևդեթ փաշան կանչում է նաև թուրքական մեջլիսի՝ խորհրդարանի անդամ Արշակ Վռամյանին (Օնիկ Դերձակյան), որը գործում էր Վանում: Նրան տանում են Վանա լճի ափ՝ Ավանց գյուղի մոտ, տոպրակի մեջ քարեր են լցնում, կապում Վռամյանի վզից և լճի մեջ խեղդամահ անում:

1905 թ. Վանի Հայոց Զորի Կեմ գյուղում ծնված ականատես-վկա Սիրակ Մանասյանը պատմել է Վանի հերոսամարտի պատմական իրադարձությունների մասին. «1915 թ. մարտի 4-ին մենք դեռ Կեմ գյուղումն էինք: Լուր հասավ, որ հասարակական-քաղաքական գործիչ պարոն Իշխանին մեր հարևան Հիրճ գյուղում սպանել են: …Մենք, որ այդ լսեցինք, հայրենակիցներով իրար անցանք: Մենք սկսեցինք պատրաստվել թուրքերի հարձակմանը» (Սվ., Վկ. 35, էջ 138):

Վանի հերոսամարտի ականատես վերապրողներ Վահան Կտրանյանը (ծնվ. 1900 թ.), Թովիկ Բաղդասարյանը (ծնվ. 1901 թ.), Մանվել Մարությանը (ծնվ. 1901 թ.), Սիրակ Մանասյանը (ծնվ. 1905 թ.), Սմբատ Դավթյանը (ծնվ. 1905 թ.), Ղազար Գևորգյանը (ծնվ. 1907 թ.), Երվանդ Շիրակյանը (ծնվ. 1907 թ.) և շատ ուրիշներ վերհիշել ու մեզ պատմել են Վանի հերոսամարտի ուշագրավ զանազան դրվագներ (Սվ., Վկ. 30–56, էջ 128–168): «Այգեստանը ամեն կողմեն պաշարված էր, – վերհիշել է Շավարշ Հովիվյանը, – թնդանոթները զետեղված են հարավային կողմեն Հաջի Բեքիր զորանոցին, իսկ հյուսիսեն՝ Բարձանց վրա՝ Թոփրաք գալեի զորանոցին, երկու կրակի մեջ թողնելով Այգեստանը՝ և՛ արևելյան և՛ արևմտյան կողմերը զինվորական շղթայի տակ առնված էին՝ հրացանի հաստղութենեն քիչ հեռու, որոնց օրն ի բուն կհսկեին կանոնավոր զորաց խմբերը»[10]:

Վան քաղաքը բաժանված էր երկու մասի՝ Այգեստան և Քաղաքամեջ: Այգեստանի Համուդ աղայի զորանոցը, որը դատարկ էր, այդ օրը լցվել էր 130 թուրք զինվորներով և դարձել չարիք հայ կռվողների համար: Բայց վանեցիները միակամ էին ու վճռական. նրանք ուխտել էին «Զեն ի ձեռին կռվելով մեռնիլ, քան՝ ոչխարներու պես մորթոտվիլ»[11]: Նրանք հրավիրում են ընդհանուր ժողով և ընտրում դիմադրողական ինքնապաշտպանական Զինվորական մարմին՝ Արմենակ Եկարյանի, Արամ Մանուկյանի և Հրանտ Գալիկյանի ղեկավարությամբ: Վանում էին նաև ֆիդայիներ Կայծակ Առաքելը, բուլղարացի զինագործ Գրիգորը, նկարիչ Փանոս Թերլեմեզյանը և ուրիշներ: Ընտրվում է նաև Պարենավորման մարմին՝ ժողովրդի սնունդն ապահովելու համար: Այգեստանի ունևորներից հավաքվում է դրամ, արմտիք, ուտելիք, նաև՝ ոչխար: Որոշվում է այդ բոլորը կենտրոնացնել, իսկ ժողովուրդը պիտի դրանք խնայողաբար սպառեր: Գևորգ Սուճյանը ևս սիրահոժար տրամադրել է իր ընդարձակ տունը Պարենավորման մարմնին[12]:

Կազմակերպվում է նաև Ամրաշեն վաշտը, որտեղ աշխատելու ընդունակ տղամարդիկ՝ որմնադիրներ, հյուսներ, ջրմուղագործներ, տներից հավաքված բահերով, բրիչներով, կացիններով սկսում են դիրքեր փորել, իսկ երկաթագործները շտապ շինում են նիզակներ՝ զինելով բնակչությանը: Այգեստանի Համուդ աղայի

---

[10] *Նույն տեղում, էջ 315:*
[11] *Նույն տեղում, էջ 313:*
[12] *Նույն տեղում, էջ 317:*

զորանոցից թշնամին հրետանու անընդհատ կրակոցներով հանգիստ չէր տալիս վանեցիներին: Ամրաշեն վաշտը, հնարամտությամբ, ստորգետնյա խրամատ փորելով, աննկատ հասնում է մինչև այդ զորանոցի հատակը և այն տակից պայթեցնում: Թուրքական զորանոցն իր զորքով ոչնչացվում է՝ վանեցիներին ազատելով այդ մղձավանջից:

Ժողովուրդը՝ տղամարդ, թե՝ կին, լծված էին աշխատանքի: Այգեստանը չորս շրջանների էր բաժանված: Յուրաքանչյուրում ստեղծված էր Կարմիր խաչի մեկ հիվանդանոց՝ վիրավորներին խնամելու համար:

1915 թ. ապրիլի 7-ին, առավոտյան ժամը 7-ին, Այգեստանից մեկ ժամվա հեռավորության վրա գտնվող Շուշանց գյուղից եկող հայ կանանց թուրք զինվորները բռնում և ուզում են անպատվել: Դիրքապաշտպան երկու կտրիճներ վրա են հասնում և փրկում նրանց, բայց տեղացող գնդակների տարափի տակ նահատակվում են: Դա դառնում է կռվի ազդանշան[13]:

Նախատեսվում էր ստեղծել «Թռուցիկ խումբ», որն իսկույն օգնության պիտի հասներ դժվարության մեջ գտնվող կռվողներին[14]:

Վանեցիները ստեղծել էին նաև վառոդի արտադրություն՝ «Վան-Տոսպ» պարբերականի խմբագիր Վարդան Պապիկյանի և Կաքավյան եղբայրների ղեկավարությամբ՝ կատարելագործելով ծխացող վառոդի որակը: Քանի որ «Մոդել» մակնիշի հրացաններն արդեն անգործածելի էին դարձել, ուստի ստեղծվում է փամփուշտարանի արհեստանոց, որն օրական 800 փամփուշտ էր արտադրում: Ստեղծվում է վնասված զենքեր նորոգող արհեստանոց՝ Նազարեթ Մադոյանի և Սահակ Քելեկյանի ղեկավարությամբ: Վանեցի մարտիկների թիվը 20 հազար էր, իսկ հրացանները՝ ընդամենը 250 էր, որոնց թիվը հետագայում հասնում է 400–500-ի[15]:

Վանի ինքնապաշտպանության ընթացքում ստեղծվում է նաև Խնամատար մարմին, որը հոգալու էր շրջակա գյուղերից եկողների կարիքները: Այնպես որ ամեն ինչ կազմակերպված էր շատ բարձր մակարդակով, մանավանդ յուրաքանչյուրը գիտակցում էր իր գործի կարևորությունը:

Վանի ինքնապաշտպանության մեջ իր նշանակալի դերն ուներ Վարժապետանոցի սաների փողային նվագախումբը՝ Խաչատուր Պուճիկանյանի ղեկավարությամբ: Ֆանֆառը ենթարկվում էր Զինվորական ղեկավար մարմնի հրահանգներին: Այն կռվի ողջ ընթացքում, դիրքից դիրք գնալով, իր խրոխտ հնչյուններով բարձրացնում էր վանեցի կռվողների մարտական ոգևորությունը և, ընդհակառակը, բացասաբար էր անդրադառնում թուրքերի վրա, որոնք զայրույթից ավելորդ ու ան-

[13] *Նույն տեղում, էջ 322:*
[14] *Նույն տեղում, էջ 323:*
[15] *Նույն տեղում, էջ 332:*

հաշիվ գնդակներ էին արձակում: Ջնդեթ փաշան զայրանում էր՝ ասելով. «Ամեն բան կարելի է հանդուրժել, բայց՝ ոչ այդ «մյուզիկի ձայնը»«[16]:

Վանի հերոսամարտին ականատես վերապրողները հետագայում հպարտության զգացումով անջնջելի դրվագներ են պատմել պատմական այդ փառահեղ իրադարձության մասին:

Վասպուրականի ինքնապաշտպանության ականատես Շավարշ Հովիվյանը վկայել է. «Առաջին օրեն իսկ Այգեստանը ստացավ ինքնորեն կառավարության մը երևույթը, ան իր Զին., Քաղ. և Տնտեսական Վարչություններովը ամենացայտուն ապացույցը կ'ուտար տոհմային ձիրքի ու ձեռնհասության, կատարելապես ռամկավարական ուղղությամբ, այսինքն յուրաքանչյուր անհատ հոժարակամ իր բաժինը կբերեր ինքնապաշտպանության փրկարար գործին»[17]:

Ականատես վերապրող Մանվել Մարությանը (ծնվ. 1901 թ., Վան, գ. Բերդաշեն) ևս վկայել է. «…1915 թ. դեպքերը ամբողջ հիշում եմ, ինչպես աչքիս դիմացը՝ տեսնում եմ: Բավական հայ երիտասարդներ տարված էին թուրքական բանակ: Իմացվեց, որ դրանք բանակից դուրս են բերված և գնդակահարված են: Հայերը համբերեցին: Հետո [թուրքերը] ժողովրդի վրա հարձակվեցին, սկսեցին թալանել, ըմբոստություններ եղան: Փաշան Արամ Մանուկյանին կանչեց, ըսավ. «Ազդու մարդ ղրկեք, որ դադարեցնեն»:

Արշակ Վռամյանը, որ Պոլիսում հայերի կողմից պառլամենտի անդամ էր, գնում է, Մանուկյանին ասում. «Ես գնում եմ, բայց դու չգաս: Սիրտս վատ բան է գուշակում»:

Նավավարները ծանր քարեր են կապում Վռամյանի վզից և գցում են ծովը: Վռամյանից հետո մենք արդեն զգացինք, որ այդ խորամանկություն է և ուր որ է պիտի պայթի, սկսեցինք զինվել: Քաղաքամեջում երկու հարյուր հոգի զենք ուներ: Քսանհինգ–երեսուն օր կյանքի և մահվան կռիվ տեղի ունեցավ: Վանեցիները կռվեցին տասնհինգ հազարանոց թուրքական կանոնավոր զորքի և քյուրդ ամբոխի դեմ, բայց դիմադրեցին: Պատանիներ կային, որ թնդանոթ էին նետում, պատրույգով էին նետում, տասը կիլոգրամ վառոդ կար մեջը: Պատրույգը հանում էին, տանում էին, որ նորից լցնեն: Մոն Շեր անունով ֆրանսացի մը կար, որ քիմիագետ էր, ըսավ. «Ես վառոդ կպատրաստեմ, միայն թե հայտարարեք, որ բոլոր մարդիկ իրենց տների մեզը հավաքեն». դրանով վառոդ էին պատրաստում: Հետո ինքը սպանվեց: …Մոտ երկու հարյուր հոգի զենքի տակ էին, չորս հարյուր հոգի դիրքերն էին պատրաստում գիշերները: Ով մթերք ուներ՝ բերավ Առաջնորդարան: Ամեն մարդ պաշտոն ուներ: Այգեստանի միջից մի խենթ աղջիկ ղրկել էին, որ հայերից լուր առնեն, բայց նա վերադարձին սպանվեց: Մեկ թուրքի կաշառեցին, որ երկտող տանի

---

[16] *Նույն տեղում:*

[17] *Նույն տեղում, էջ 334:*

Քաղաքամեջ, որով հայտնում էին, թե՝ մեկ շաբաթ դիմացեք, ռուսական զորքը գալիս է: Թուրքերը այդ լսելով՝ կամաց-կամաց հեռացան: Մենք երեխա էինք, բայց չէինք վախենում, փամփուշտ էինք հավաքում: Հայրս ճարտարապետ էր, դիրքերու շինությունը կհսկեր: Քահանաները և վարդապետները ևս կռվում էին: Թուրքերը քյուրդերին էին գցում մեզ վրա: Հիշում եմ, երբ կռիվը վերջացավ, մի թուրք եկավ, ասաց. «Ամբողջ մորթված դիակներ են: Քահանան մորթված է եկեղեցու շեմին, գլուխը Մարիամ Աստվածածնի նկարի առաջ է դրված»: Թուրքական բանակից հետո ո՛ր գյուղը մտանք՝ դիակներ էին, գազազած շները, կատուներն ու անգղները հոշոտում էին դիակները, որոնց թուրքերը սպանել էին ու լցրել փոսերի մեջ. նրանք առանց աղոթքի հողին հանձնվեցին: Վասպուրականցիները երեսուն–քառասուն զոհ տվեցին, բայց անպաշտպան ժողովրդից հազարներ զոհվեցան: Ես ինչ որ պատմում եմ, ականատեսի հուշերս են: Ռուսական բանակը մոտեցավ: Առաջ կամավորական բանակը մտավ, և մենք փրկվեցինք» (Սվ., Վկ. 32, էջ 133):

Վանեցի ականատես Թովիկ Բաղդասարյանը (ծնվ. 1901 թ.) պատմել է. «Երեսուն օր թուրքերը կռվեցին հայերի դեմ: Հայերը դիրքեր էին փորում: Մենք անփորձ էինք, չգիտեինք, թե ինչ կա, բայց Վանի երեխաները շատ բան գիտեին: Մեզ երբ Վարագա վանքից բերեցին Վան, տեսա հայկական թաղամասում՝ Այգեստանում Ֆանֆառի նվագախումբը «Մեր Հայրենիք» էր նվագում և ոգևորում էր կռվողներին: Երեսուն օր հետո, երբ թուրքերը ռուսների անունը լսեցին, փախչում էին» (Սվ., Վկ. 31, էջ 129):

Վանեցի ականատես վկա Սիրակ Մանասյանը (ծնվ. 1905 թ.) ավելի է մանրամասնել. «…Ամեն առավոտ Վանի փողային նվագախումբը նվագելով ման էր գալիս՝ երեխաները նրա ետևից: Արդեն Վանի ինքնապաշտպանությունն էր: Մի հայ ասաց մեզ՝ երեխաներիս. «Գնացե՛ք փամփուշտներ հավաքեք, բերե՛ք, որ նորը պատրաստեն»: Մենք գնացինք փամփուշտներ հավաքեցինք, տվեցինք արհեստանոցին: Հասավ օրը, երբ կռիվն ուժեղանում էր Վանում, Այգեստանում: Վասպուրականցիները, որ հավաքվել էին այնտեղ, մեծ կամքի ուժով պաշտպանեցին և՛ Այգեստանը, և՛ Վանի կենտրոնը՝ Քաղաքամեջը: Մերոնք ուժեղ մարտեր մղեցին և՛ Այգեստանում, և՛ Քաղաքամեջում: Թուրքերը լսելով, որ ռուսական զորքը Սալմաստից գալիս է Վան, խուճապահար սկսեցին հեռանալ: Մերոնք հարձակվեցին, ոչ միայն թուրքերին ոչնչացրին, այլև մեծ ավար ձեռք բերեցին՝ հրետանի, փամփուշտներ և այլն: Մայիսի 6-ին Վանի բերդի վրա ծածանվեց հայկական դրոշակը: Վասպուրականցիները մեծ սիրով ընդունեցին ռուսական զորքերին և հայ կամավորներին՝ Զորավար Անդրանիկի ղեկավարությամբ» (Սվ., Վկ. 35, էջ 139):

Վանի շրջակա գյուղերում թուրքերը հասցրել էին տեղում բնաջնջել հազարավոր հայերի: Բնականաբար, եթե Վանում ինքնապաշտպանության չդիմեին, վանեցիները նույնպես պիտի նահատակվեին: Ինչպես վկայել է վանեցի ա-

կանատես վերապրող, Գյումրու թատրոնի վաստակաշատ դերասան Արծրուն Հարությունյանը (ծնվ. 1907 թ.), «Ինքնապաշտպանությունը ծնվում է, երբ ժողովրդի նկատմամբ բռնություն է լինում…» (Սվ., Վկ. 40, էջ 147):

Ուստի, Ագդաղում, Շատախում, Վանում և այլ վայրերում մղված ինքնապաշտպանական հերոսամարտերը իթթիհատական կառավարության կիրառած բռնությունների դեմ ըմբոստացող արևմտահայության ազնիվ պոռթկումն էր, նրա բողոքի ձայնը՝ ուղղված աշխարհի մեծ տերություններին: Այդ է վկայում նաև ժողովրդական երգը, որը հաղորդել է վանեցի ականատես վերապրող, ԵՊՀ քիմիայի դասախոս, դոկտոր Աղասի Քանքանյանը (ծնվ. 1904 թ., Վան).

Ա՜խ, Վասպուրական, տխուր Հայաստան,
Անթիվ հերոսներ քեզմե զոհվեցան,
Ահեղ կռվի մեջ այնքան դիմացան,
Ի սեր ազգության նահատակվեցան:

Վան փոքրիկ քաղաք գավառակներով,
Լցվան դիակներ հարյուր հազարով,
Ներկվեցավ դաշտը կարմիր արյունով,
Ձայն տվին ամպեր, երկինք ու աստղեր,
Այնպես կգոռան ու կիրամայեն,
Որ Եվրոպան և Ամերիկան լսեն…

(Սվ., Վկ. 628, էջ 619):

Սակայն ո՛չ Եվրոպան, ո՛չ էլ Ամերիկան չմիջամտեցին, միայն հայ կամավորներն ու ռուս զինվորները սատար կանգնեցին անօգնական ժողովրդին:

Առաջին համաշխարհային պատերազմի հենց սկզբից թուրք կառավարողները գլխավոր հարվածն ուղղել են Մուշի և Սասունի դեմ, որոնք անցյալում հայտնի էին որպես հայ ազգային-ազատագրական շարժման կարևոր կենտրոններ: Կատարելով կառավարության հրահանգները՝ տեղական իշխանությունները զինվորական հրամանատարության հետ մշակում և գործադրում են հիշյալ գավառների հայության բնաջնջման հրեշավոր ծրագիրը:

1915 թ. գարնանը թուրքական կանոնավոր զորամասերը քրդական աշիրաթների հետ հարձակվում են Մուշի և Սասունի հայ բնակչության վրա: Մուշի հայերը պատրաստ չէին ինքնապաշտպանության, մանավանդ որ գավառի հայ ղեկավարները միակարծիք չէին դիմադրություն կազմակերպելու համար: Հետևաբար, Ցրոնք, Գոմս գյուղերի բնակիչները գազանաբար ոչնչացվեցին: Հայերին լրիվ բնաջնջումից փրկեց կամավորների և ռուսական բանակի մոտենալը: Վերջիններս

հետապնդում էին նահանջող թուրքերին և մայիսի սկզբին հասան Բուլանըխ՝ մոտենալով Մուշին:

Թուրքերի համար ստեղծվում է ծանր դրություն: Այդ պայմաններում առավել վճռական տրամադրված Մուշի հայոց առաջնորդներից Հակոբ Կոտոյանի ղեկավարությամբ կազմակերպվում է մշեցիների զինյալ դիմադրությունը: Սակայն առաջացած տարաձայնությունների պատճառով պահը բաց է թողնվում[18]:

Շուտով ռազմաճակատում դրությունը փոխվում է, ռուսական բանակը նահանջում է: Հունիսի վերջին թուրքական զորքերն անցնում են հարձակման, մշեցիների վիճակը խիստ ծանրանում է: Նրանք գրավում են քաղաքի բարձունքները, շրջապատում հայկական թաղամասերը: Սկսվում է հայ բնակչության կոտորածն ու ողջակեզը: Հուսահատության եզրին հասած մշեցիներն իրենց սակավաթիվ հրացաններով սկսում են կռվել: Կռվում էին և՛ տղամարդիկ, և՛ կանայք, իսկ երեխաներն օգնում էին մեծերին:

1915 թ. հունիսի 20–30-ը տեղի են ունենում համառ մարտեր գերազանց թվով թուրքական զորքերի և հրոսակների դեմ: Հայ բնակչությունը միայնակ էր, կռվում էր քաջաբար՝ մարտնչելով ամեն մի տան համար: Սակայն թուրքերի քանակական ու զինական առավելությունը հարկադրում է մշեցիներին նահանջել: 700 մարտիկ կարողանում է ճեղքել պաշարման օղակը և բարձրանալ լեռները: Թուրքերը ներխուժում են Մուշ և հիմնովին կոտորում բոլորին: Միայն 400 հոգի է փրկվում: Նույն բախտին են արժանանում Մշո դաշտի շուրջ 100 հայաբնակ գյուղերի բնակիչները, որոնք մարագներում և գոմերում անխնա ողջակիզվում են: 15–20 հազար մարդ բարձրանում են Ս. Կարապետ լեռը և դիմադրում թշնամուն: Սակայն անղեկ ու անօգնական մնացած զոյամարտն ավարտվում է անհաջողությամբ՝ տալով անհաշիվ զոհեր: Մուշը լրիվ ավերվում է:

Այդ ընթացքում հայ զինյալների մի խումբ Մշո դաշտից նահանջում է Սասուն՝ միանալու սասունցիներին՝ համատեղ ուժերով դիմադրելու թուրք և քուրդ ջարդարարներին:

Մուշից և Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից հայերի զանգվածային կոտորածների մասին հասնող լուրերը, սասունցիներին հարկադրել էին պատրաստվել ինքնապաշտպանության՝ ունենալով միայն 1.000 հին ու նոր մարտական և որսորդական հրացան:

Սասունի պաշտպանների խմբերը, որոնց գլխավորում էին Փեթարա Մանուկը, Ռուբենը, Կոմսը, իշխան Շառոն և ուրիշներ, կարողացել էին 1915 թ. մարտին հետ շպրտել Սասուն ներխուժած թուրքական ու քրդական ուժերին, որոնք հարձակվել էին Տալվորիկի վրա: Ապրիլ-մայիս ամիսներին ևս սասունցիները հերոսական դիմադրություն են ցույց տալիս թուրքական զորքերին, սակայն, թշնամու հրանոթա-

[18] *Մ. Ավետյան. նշվ. աշխ., էջ 354–362:*

յին գնդակոծությանը չդիմանալով, մեծ կորուստներով՝ հայ մարտիկները նահանջում են Անդոք լեռան լանջերը և այնտեղից շարունակում պայքարը: Հունիսին համառ կռիվներ են տեղի ունենում Ասանքի շրջանում: Գոմուց վանքի ու Տալվորիկի մարտիկները խուճապի են մատնում քուրդ հրոսակներին և գրավում Սատանի կամուրջը: Քսակցիները օգնության են հասնում նրանց:

Հուլիսի 30-ին սասունցիները ազատում են Շենիկը, բայց թշնամին նոր հարձակումով գրավում է Անդոքի փեշերին գտնվող գոմերը, որտեղ պատսպարված հազարավոր կանանց ու երեխաներին ողջակիզում են: Անդոքի, Ծովասարի և Գերինի լեռներում գոյատևող սասունցիները հերոսաբար պաշտպանվում են իրենց վրա հարձակվող թուրքերից ու քրդերից: Մուշում և նրա դաշտում կոտորածներից փրկված ու Քանայի և Հավատորիկի լեռներում ամիսներ շարունակ ապաստանած մոտ 30 հազար անտուն հայեր դժվարությամբ դիմադրում են: Սակայն, այստեղ ևս, անդեկ մնացած Սասունի գոյամարտը դաժանորեն ճնշվում է:

«Թուրքը հարձակվավ, սկսավ կոտորել, – պատմել է սասունցի վերապրող Առաքել Դավթյանը (ծնվ. 1904 թ.), – լավ աղջիկներին, լավ կնիկներին տարան, փախցրին: Մեր գյուղը Միսակ անունով մի ֆեդայի կար: Էն զենք ուներ, մտավ վանք, սկսավ կռվիլ: Մենք զենք չունեինք: Սասուն երկու ամիս դիմադրեց: Թուրք զինվորներ եկան պաշարեցին, սկսեցին կոտորել: Օգնություն չկար՝ կոտորեցին» (Սվ., Վկ. 4, էջ 84):

Սասունի Շենիկ գյուղից ականատես վերապրող Խաչիկ Խաչատրյանը (ծնվ. 1900 թ.) նույնպես վկայել է. «Էկավ թուրքական զորքը՝ մոտ վաթսուն հազար: Էկան շրջապատեցին գյուղը: Մերոնք դիմադրեցին: Երկու անգամ թուրքական բանակ լցվավ գյուղը: Երկու անգամ էլ մեր ֆեդայիները և ովքեր որ զենք ունեին, ետ քշեցին: Հավաքվել էին գյուղի կենտրոնը: Երեք օր առաջ մեր ժողովուրդ քաշվել էր գյուղից: Գնացել էր Անտոք: Երեխաները կանանց հետ, ես էլ հետները գնացի: Հուլիսի սկիզբը գնացինք Անտոք: Ո՛չ հաց, ո՛չ ջուր, միայն անլի միսն էր, աղ էլ չկար: Մոտ 45 օր էնտեղ մնացինք: Կովողները՝ կովան: Թուրքական զորքը էկավ Անտոք: Էդտեղ էլ կովան: 45 օր վերջը մեր հաց, մեր պաշար լրացավ: Հաց չկար: Մնաց փոխինը: Թուրքի զորք էկավ լցվավ: Զորեր երեխաների ջանդակներ լցվան: Մայրեր չկարցան փախցնել: Թուրքերն ու քյուրդերը կրակում էին: Մեկ գնդակից տասը մարդ էր ընկնում: Ով փախավ՝ պրծավ: Հարսներին տարան: Վերջում լեռից ժողովրդին թափում էին գետը, որ փամփուշտ չօգտագործեն: Գետի ջուրը էնքան մարդ տարավ…» (Սվ., Վկ. 2, էջ 82–83):

Սասունցի ականատես-վկա Եղիազար Կարապետյանը (ծնվ. 1886 թ.), օրը օրին հանգամանորեն ներկայացնելով պատմական այդ իրադարձությունների մանրամասնությունները, նշել է. «Քրդերի հարձակումները հայերի վրա իբր թե անպաշտոն բնույթ էին կրում, բայց ընդհանուր համոզմունք կար, որ այդ բոլորը կատար-

վում էր կառավարության տված խորհուրդներով: Այսպես, դարերի ընթացքում հողին ու մաճին կառչած հայաշատ այդ գավառը մի ցերեկվա և մի գիշերվա մեջ դարձավ ամայի՝ անմարդաբնակ: Իսկ նրա սեփական տերերը անողոք թուրքերի ու քրդերի ձեռքով հրեշային գործողությամբ՝ սրով մորթվեցին, կրակով այրվեցին, ջրով խեղդամահ եղան՝ 105 գյուղերի 70.000–80.000 երկու սեռի պատկանող հայ բնակիչները: Թալանի տրվեց միլիոնների հասնող նրանց հարստությունը: …Հունիսի 28-ի օրը ոչ բարով Վարդավառի կիրակին էր. հայ ժողովրդի ուրախության տոնը, ավա՛ղ, դարձավ «մարդավառի» կիրակի՝ Տարոնի դաշտի հայության համար…» (Սվ., Վկ. 1, էջ 74–75):

Պատմական այս իրադարձություններին առընթեր հյուսվել է նաև ժողովրդական երգը, որը Թալինում հաղորդել է Մուշեղ Հովհաննիսյանը (ծնվ. 1908 թ., Սասուն).

…Սասուն գավառ անտառներով,
Պարսպապատ բարձր լեռներով,
Դեմ կանգնեց միշտ թուրք զորքին.
Սասուն բուրե տաք արյան հոտ
(Սվ., Վկ. 627, էջ 619):

«Տաք արյան հոտ» էր բուրում նաև հերոսական Շապին-Գարահիսարում, Կարինում, Պոնտոսում, Սվազում, Խարբերդում, Մալաթիայում, Դիարբեքիրում, Արևմտյան և Կենտրոնական Անատոլիայի հայաբնակ վայրերում՝ Իզմիթում, Բուրսայում, Անկարայում, Կոնիայում և այլուր: Աննկարագրելի դաժանությամբ ոչնչացնում էին բոլորին՝ չխնայելով նույնիսկ մանուկներին:

Չենթարկվելով թուրքական կառավարության կորստաբեր հրամանին՝ Շապին-Գարահիսարի հայերը հավաքվում և որոշում են կռվել մինչև արյան վերջին կաթիլը: Շապինգարահիսարցի վերապրող Խորեն Այվազյանը պատմել է, որ Շապին-Գարահիսար քաղաքը շրջապատված էր 16-ից ավելի հայկական գյուղերով: Բնակչությունը զբաղվում էր գյուղատնտեսությամբ և առևտրով: Նրանք նաև ուսումնատենչ էին: Երբ Առաջին համաշխարհային պատերազմը սկսվեց, 300 հայ երիտասարդների թուրքական բանակ զինվորագրեցին, բայց նրանց զենք չտվեցին, այլ՝ ուղարկեցին ամիլե թաբուր (աշխատանքային գումարտակ)՝ ծանր աշխատանքներ կատարելու, որտեղ և սպանվեցին[19]:

1915 թ. մայիսին քաղաքում սկսվում են զանգվածային ձերբակալություններն ու սպանությունները: Թուրքերով և չերքեզներով շրջապատված հայության վիճակն օրեցօր ծանրանում է: Հունիսի 2-ին բանտից ազատված ավազակների խուժանը

[19] *Հուշամատյան Մեծ եղեռնի, խմբ. Գերսամ Ահարոնյան, Բեյրութ, 1965, էջ 771–780:*

թուրք ոստիկանների հետ հարձակվում է Շապին-Գարահիսարի շուկայի վրա, և սկսվում է կողոպուտը, իսկ հայ խանութպաններին ձեռքերը կապկպած տանում են բանտ:

Գյումրու երկաթգծի կայարանում աշխատող ականատես վերապրող Քաջունի Ղարագյոզյանը (ծնվ. 1905 թ., Շապին-Գարահիսար, գյուղ Թամզարա) վկայել է. «... Մի օր հայրիկս, ամեն օրվա պես, գնացել էր քաղաք, իր կտորեղենի խանութը, բայց երեկոյան չվերադարձավ: Եվ ոչ ոք քաղաքից չվերադարձավ: Լուր ստացանք, որ քաղաքի 300 հայ վաճառականների խանութները խուզարկել են, հետո շարք են կանգնեցրել նրանց և տարել բանտ: Նրանց մեջ է եղել նաև մեր սիրելի հայրիկը: Մեր հարևանները և ազգականները եկան մեզ մխիթարելու: Հաջորդ առավոտյան մայրս ինձ վերցրեց, որ գնանք քաղաք՝ բանտում հայրիկին տեսնելու: Բավական ճանապարհ անցել էինք, երբ մեր դեմ ելնող ճանապարհորդները, որոնք քաղաքից էին գալիս, ասացին, որ քաղաք չգնանք, քանի որ՝ «Էրմէնիլերի քեսիյորլար» (Հայերին կոտորում են – թուրք.):

Մենք չգիտեինք ի՞նչ անել, բայց ետ վերադարձանք տուն, քանի որ փոքր քույրեղբայրները մենակ էին տանը: Հաջորդ օրը, երբ ես գնացել էի, մեր շուկայի անկյունից դիտում էի, թե ինչ է կատարվում ոստիկանատանը. տեսա որ ձեռքերն իրար կապած 8 մարդու բերեցին ոստիկանատուն, հետո մեր գերեզմանատան պատի տակ կանգնեցրեցին ու սպանեցին: Լսեցինք, որ 300 վաճառականներին, այդ թվում և հայրիկիս կացիններով սպանել են հենց բանտում: Լսեցինք նաև, որ Շապին-Գարահիսարի հայերը գիշերով բարձրացել են բերդը և ինքնապաշտպանության դիմել» (Սվ., Վկ. 98, էջ 238):

…Շապինգարահիսարցիները շտապ ժողով են գումարում և ստեղծում դիմադրողական Զինվորական խորհուրդ Ղուկաս Դեովլեթյանի, Ավագ Տուրիկյանի, Գարեգին Կարմիրյանի, Շապուհ Օզանյանի և Իսրայել Օզանի ղեկավարությամբ, որոնք պիտի հոգային բնակչության պաշտպանությունը: Անհրաժեշտ էր բանտից ազատել բանտարկված անմեղ հայ խանութպաններին: Ժողովի ընթացքում ազատագրական պայքարի հերոս Սեբաստացի Մուրադը հայտարարում է, որ իր տրամադրության տակ ունի տարբեր վայրերի փախստականներից կազմված 10 հազար երիտասարդ, որոնք պատրաստ են միանալու ռուսական բանակին, սակայն Էրզրումից հասած թուրքական վաշտը շրջապատել է Շապին-Գարահիսարը:

Հունիսին շապինգարահիսարցիները գործի են անցնում. քանդում են փողոցների սալահատակները և պատնեշներ բարձրացնում, տղամարդիկ դիրքեր են կառուցում, կանայք տոպրակներ են կարում, որոնց մեջ երեխաները ավազ են լցնում՝ պատսպարվելու համար: Հայկական որոշ տներում մարտկոցներ են տեղադրում: Նախահարձակ թուրք հրոսակախմբերին հայերն արժանի հակահարված են տալիս:

Շապուհ Օզանյանն իր թռուցիկ խմբով հարձակվում է կառավարական շենքի վրա, որտեղ հայ խանութպան բանտարկյալներն էին: Անակնկալի եկած թուրք պահակ զինվորները «գյավուր գել՛դի» ասելով, սարսափահար փախչում են: Երբ հայերը ներս են մտնում, տեսնում են, որ բոլոր հայ բանտարկյալները կացնահարված, գետնատարած փռված են: Վերադարձին Շապուհ Օզանյանը սպանվում է՝ մեծ վիշտ պատճառելով բոլորին:

Հաջորդ օրը թուրքական թնդանոթների ռմբակոծումից հրդեհվում է հայկական Պարտեզ թաղամասը և ավերում շուրջ 3 հազար փայտաշեն տուն: Հայերի վիճակը դառնում է անմխիթար: 5.062 անօթևան մնացած հայ ստիպված նահանջում է մոտակա բարձունքին կառուցված հնամենի բերդը: Թուրքերը շրջապատում են այն: Սկսվում է երկկողմ հրաձգություն: Շուտով թուրքերը, համալրում ստանալով Սեբաստիայից, գերմանական սպաների աջակցությամբ սկսում են ռմբակոծել բերդը:

Կռվի 7-րդ օրը Սեբաստիայի Մուամեր կուսակալը սպիտակ դրոշով սուրհանդակ է ուղարկում, որ հայերը հանձնվեն, բայց վերջիններս ուխտել էին կռվել մինչև արյան վերջին կաթիլը: Թուրքական թնդանոթները շարունակում են ռմբակոծել բերդը: Երեք օր հետո կուսակալը կրկին պահանջում է հանձնվել, բայց հայերն անդրդվելի էին: Բերդում զգացվում է ջրի և սննդի պակաս, սակայն շապինգարահիսարցիներն որոշել էին «զենքը ձեռքին արժանապատվությամբ մեռնել»:

Հունիսի 23-ին թնդանոթների անընդմեջ համազարկերով, թուրքերը գրավում են բերդի դարպասը: Երկու հայ երիտասարդ կենաց-մահու պայքար են մղում 70 թուրք զինվորների դեմ, որոնց հաջողվել էր ժայռի վրա մագլցելով հասնել բերդի դարպասին: Դրությունը օրհասական էր, անհրաժեշտ էր մի ռումբ հասցնել դարպասի պաշտպաններին: Հանկարծ 14-ամյա Հմայակ Թևեքելյանը խաչակնքվում է և, հանելով վերնազգեստը, դրա մեջ է փաթաթում ռումբը և վազում դեպի դարպասը, բայց մոտակա քարանձավի առաջ փոքրիկ հերոսը ընկնում է գնդակների տարափի տակ: Քարայրի միջից կանացի մի ձեռք զգուշորեն վերցնում է ռումբը և շպրտում թուրքերի վրա, որոնք սպանվում են: Բերդի ներսում կուտակված դիակների նեխումից արդեն համաճարակ էր սկսվել: Այդ անելանելի վիճակում որոշվում է փոքր խմբով գիշերային հարձակումով ճեղքել թշնամու պաշարման օղակը, դուրս գալ հարևան շրջաններ՝ բերդում գտնվողներին փրկելու հույսով: Բերդում մնացածներից շատերը թշնամուն չհանձնվելու համար թույն են խմում: Չնայած հաջորդ օրերի լռությանը՝ թուրքերը չէին հանդգնում մոտենալ բերդին: Բայց երբ հունիսի 29-ին, պաշտպանության 27-րդ օրը, թուրքերը ներխուժում են բերդ, սկսում են կացնահարել ողջ մնացածներին: Պատվախնդիր հայուհիները նետվում են անդնդախոր ձորը, որպեսզի փրկեն հայ կնոջ պատիվը: Իսկ ականատես-վկա Հակոբ Թերզյանը (ծնվ. 1910 թ., Շապին-Գարահիսար) բերդում անպաշտպան մնացած հայ փոքրիկ տղաների մասին 1979 թ. Նյու Յորքում ինձ պատմել է. «Ես

արդեն յոթանասունինը տարեկան եմ: Շապին-Գարահիսարեն եմ ես: Երբ կդիմադրեին թուրքերուն, ոմանց ջարդեցին, իսկ մեզ նման երեխաներիս տարին թուրքին որբանոցը: Մեզ մերկացրին, սուրը դրեցին վիզներուս: Զաբիթը սուրը քաշում է, մոլլան՝ ասում. «Քրիստոնյայի հավատքը թողնում եմ, մահմեդականություն եմ վերցնում»: Մեզ կրկնել կուտային ադ խոսքերը» (Սվ., Վկ. 100, էջ 246):

Հետագայում օրորի ձևով հյուսվել է տխուր, բայց հուսադրող ժողովրդական այս երգը.

Դա շապիկն է այն քաջ մարդուն, բալա ջա՛ն,
Որ քեզի հայր էր կոչվում, օրո՛ր, օրո՛ր, բալա ջա՛ն,
Դե մեծացի՛ր, շուտ բոյ քաշի՛ր, բալա ջա՛ն,
Վատի արյուն ծծել սորվիր, օրո՛ր, օրո՛ր, բալա ջա՛ն[20]:

Ահա թե ինչու, իրենց ազգությունը, հավատն ու հայրենիքը չուրանալու համար հայերը մինչև վերջ դիմադրել են թշնամուն: Սակայն երբ ռուսական զորքերը նահանջում են, ստիպված նրանց ետևից Արևելահայաստան են գաղթում նաև Վանի, Սասունի, Շատախի, Շապին-Գարահիսարի, Մուշի, Բիթլիսի, Ալաշկերտի, Բայազետի, Բաբերդի, Էրզրումի և այլ բնակավայրերի հայերը: Նրանք արցունքներով, բայց ճարահատված թողնում են իրենց Երկիրը՝ իրենց հազարամյա պատմական բնօրրանն ու մղկտալով բռնում են գաղթի ճամփան: Այդ աննկարագրելի ազգային մեծ վիշտն իր հորինած եղերերգի մեջ է խտացրել մշեցի վերապրող Շողեր Տոնոյանը (ծնվ. 1901 թ.).

Անտեր թողինք Մշո անուշ դաշտ-դուրան,
Սուրբ օթևան, տուն ու տանիք ու վաթան,
Մատուռ ու վանք, գիրք ու կանոն, Ավետրան,
Մնաց անտեր, մնաց՝ ընկավ շան բերան…

(Սվ., Վկ. 653, էջ 630):

Գաղթն իսկական ողբերգություն էր: Ճանապարհին մարդկային անհաշիվ զոհեր տալով՝ ունեզրկված, ուժասպառ, թուրք և քուրդ ջարդարարների կրակոցներից հազիվ ճողոպրելով, ճամփին անթաղ մեռելներ թողնելով, փոշու ամպերի միջով տխուր-տրտում առաջ էր շարժվում արևմտահայ գաղթականների անվերջանալի մարդկային հեղեղը, որի սկիզբը, հայ կամավորների և ռուսական բանակի զինվորների օգնությամբ, արդեն Արաքս գետն անցնելով, հասել էր Ս. Էջմիածին և ծվարել վանքի պատերի տակ, իսկ մյուս ծայրը՝ դեռ Արևմտյան Հայաստանում էր:

[20] *Նույն տեղում, էջ 780:*

…Ահավոր մղձավանջ ապրեց նաև Կիլիկիայի հայությունը:

Հայաշատ Կիլիկիայով էր անցնում բացառիկ կարևորություն ներկայացնող Բեռլին–Բաղդադ երկաթուղին: Այդ հանգամանքը մտահոգում էր Թուրքիայի կառավարությանը, քանի որ Կիլիկիայի աշխատասեր ու գործունյա հայությունն իր բարգավաճ վիճակով կարող էր տիրապետող դառնալ թուրքական տնտեսության մեջ: Լեռնային Կիլիկիայում Հաճընից, Զեյթունից մինչև Դյորտյոլ սփռված էին հայկական գյուղերն ու ավանները, որոնց բնակիչները թեև զբաղվում էին մետաքսագործությամբ, ջուլհակությամբ, գորգագործությամբ և այլ տոհմիկ արհեստներով, սակայն նոր սերունդը բավական լուսավորյալ էր՝ այնտեղ գործող հայ և օտար դպրոցների ու կոլեջների շնորհիվ, որոնք կարևոր դեր էին կատարել նրանց հոգեգիտակցական աշխարհի ձևավորման վրա: Բացի այդ, 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո խոստացված, բայց չիրականացված «բարեփոխումների» վերաբերյալ, Թուրքիայի շատ գավառներում ծայր առած բռնություններն ու կոտորածները դեռևս վերջնականապես չէին բնաջնջել ի բնե ազատատենչ կիլիկիացիներին: Կիլիկիայի արծվաբույն Զեյթունը վաղուց արդեն թուրքական բռնակալության զայրույթի կիզակետն էր դարձել: Հետևաբար, ժամանակն էր հին հաշիվները մաքրել նաև համարձակ զեյթունցիների հետ:

Պատմական այս իրադարձությունների մանրամասները հանգամանորեն լուսաբանվել են զեյթունցի ականատես-վկա վերապրողների՝ Գյուրջի Քեշիշյանի (ծնվ. 1900 թ.), Հովսեփ Բշտիկյանի (ծնվ. 1903 թ.), Կարապետ Թոզլյանի (ծնվ. 1903 թ.), Եվա Չուլյանի (ծնվ. 1903 թ.), Սեդրակ Գայբակյանի (ծնվ. 1903 թ.), Սամվել Արջիկյանի (ծնվ. 1907 թ.) և Գայանե Ադուրյանի (ծնվ. 1909 թ.) պատմած հուշերում (Սվ., Վկ. 252–258, էջ 444–460):

Կիլիկիացիները, որոնք հայկական վերջին թագավորության (XI–XIV դդ.) արժանի հետնորդներն էին և անցյալի ազգային-ազատագրական պայքարի փառապանծ ավանդույթներ ունեին, կարող էին այս անգամ էլ անձնվեր պայքարի դուրս գալ, բայց դրան խանգարում են Կիլիկիայի կաթողիկոս Սահակ Բ Խաբայանն ու հայ երևելիները, որոնք, հավատալով թուրքական կառավարության կեղծ խոստումներին, «հնազանդության» կոչ են անում:

Զեյթունցի ականատես-վկա Կարապետ Թոզլյանը (ծնվ. 1903 թ.), անդրադառնալով իր անցյալին, նշել է. «… Զեյթունը ունեցել է երկաթի հանք: Ես հիշում եմ, քարերը կհալեցնեինք հորս արհեստանոցում, կտանեինք Զեյթուն քաղաքը, երկաթագործները հրացանի լյուլե, գնդակ կպատրաստեին: ... Մեր գերդաստանը երկու հորեղբայր ունեինք, հայրս և հորեղբայրս զենք սարքող էին, որ թշնամին գա՝ պատրաստ ըլլանք, որ թուրքի դեմ վիզ չծռենք» (Սվ., Վկ. 254, էջ 452): ... Արդեն զեյթունցի մայրերը դեռ փոքրուց իրենց զավակներին քաջ ու անվախ դաստիարակելու համար օրորոցայինի փոխարեն իրենց բարբառով կերգեին.

Որդիս վաղը կդառնա կտրիճ,
Թշնամու դիակը կփռե գետնին,
Արծաթ օղակով հրացանն ուսին
Ինքնամոռաց նա պիտի կռվի[21]:

Բայց և այնպես, թուրքական կառավարությունը ինչպես այլ վայրերում, Կիլիկիայում ևս հավաքել էր հայերի զենքերը, երիտասարդներին զորակոչել թուրքական բանակ, բայց նրանցից շատերը կարողացել էին բանակից փախչել և թաքնվել Զեյթունում: Մայիսի կեսին Խուրշիդ փաշան 3.000 զորքով գալիս, պահանջում է դասալիքներին, որոնք ապաստանել էին Բերզնկա լեռան վրա կառուցված հինավուրց Ս. Աստվածածին վանքում: 1915 թ. մարտի 25-ին թշնամին սկսում է գնդակոծել վանքը: Զեյթունի ինքնապաշտպանները, Փանոս Չաքրյանի գլխավորությամբ, պատասխանում են թշնամուն՝ խնայելով իրենց փոքրաքանակ փամփուշտները: Զեյթունցի քաջերը, Արամ Չոլաքյանի ղեկավարությամբ, վանքի ետևի լուսամուտներից թռչելով, անտառների միջով անցնում են Ֆրնդրջագ գյուղաքաղաք՝ օգնության հասնելու այնտեղ ևս ծայր առած ինքնապաշտպանությանը:

Ապրիլի 9-ին Զեյթունի 300 երևելիները և իրենց ընտանիքները տարվում են զորանոց, որտեղից բոլորին քշում են անծանոթ վայրեր: Սրանք առաջին տարագրվողներն էին: Սկսվում է Զեյթունի բռնագաղթը: Նախ՝ դատարկվում է վանքի թաղը, հետո՝ Զեյթունի շրջակա գյուղերը, այնուհետև ավերվում է արծվաբույն Զեյթունը:

1915 թ. գարնանից մեկը մյուսի հետևից դատարկվում է Մարաշը, Այնթապը, Հաճընը, Անտիոքը, Իսկենդերունը, Քեսաբը և հայաբնակ այլ վայրեր:

Հուլիսի 26-ին ստացվում է Քեսաբի հայության բռնագաղթի հրամանը: Վերապատվելի Տիգրան Անդրեասյանը, Զեյթունից բռնագաղթված թափորներից ճողոպրելով, հասնում է հայրենի Մուսա լեռ և պատմում թշվառ հայ տարագիրների կրած անասելի տառապանքների մասին: Տեսնելով, որ հերթն իրենց է հասնելու, Մուսա լեռան յոթ գյուղերի գրեթե բոլոր բնակիչները միաբանվելով, որոշում են՝ չենթարկվել տեղահանության կորստաբեր հրամանին:

Մուսա լեռան հերոսամարտի մասնակից, 106-ամյա Մովսես Փանոսյանը (ծնվ. 1885 թ.) իրեն հատուկ երիտասարդական ավյունով է պատմել այդ դեպքերը՝ վերհիշելով մուսալեռցիների երդումը. «Ես այստեղ եմ ծնվել, այստե՛ղ էլ պիտ մեռնեմ, ես չե՛մ գնա ստրուկի նման թշնամու հրամանի տակ չարչարանքով մեռնելու. հրացանը ձեռքիս կմեռնեմ այստեղ, բայց գաղթական չե՛մ դառնա» (Սվ., Վկ. 281, էջ 478):

[21] *Վ. Սվազլյան. Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Երևան, 1994, Վկ. 147, էջ 117:*

Մուսա լեռան ինքնապաշտպանական հերոսամարտի մասնակից Մովսես Փանոսյանը (ծնվ. 1885 թ.), Մովսես Բալաբանյանը (ծնվ. 1891 թ.), Հովհաննես Իփրեջյանը (ծնվ. 1896 թ.), Տոնիկ Տոնիկյանը (ծնվ. 1898 թ.) և շատ ուրիշներ նույնպես պատմել են այդ իրադարձության ուշագրավ մանրամասները (Սվ., Վկ. 283–297, էջ 478–510):

Մուսա լեռան հերոսամարտի մասնակից Պողոս Սուպկուկյանը – Աշուղ Դնելլին (ծնվ. 1887 թ.) մուսալեռցու արժանապատվության զգացումով է ինձ հաղորդել իր ստեղծած վիպերգը, որից մեջբերենք մի հատված հերոսամարտի ղեկավարի խոսքից.

…Եսայի Յաղուբյանի խոսքերը հնչեցին.
– Թող լեռ բարձրանան, – ասաց բոլորին, –
Թշնամու առաջ մենք վիզ չե՛նք ծռի.
Զարկենք, զարկվենք, մեր հողում մեռնենք

(Սվ., Վկ. 454, էջ 586):

Բողոքի ու վրեժխնդրության զգացումը համակում է բոլորին: Այր ու կին, մանուկ ու ծեր, թողնելով իրենց տունն ու այգին, վերցնելով իրենց պարենն ու ռազմամթերքը, բարձրանում են Մուսա լեռան անմատչելի գագաթը՝ կրծքով պաշտպանելու իրենց պատիվն ու արժանապատվությունը՝ կռվով դիմադրելու թշնամու բազմահազար զորքին: Բոլորն անխտիր, առանց ժամանակ կորցնելու, կազմակերպված ձևով սկսում են վրաններ լարել, խրամատներ փորել, ամուր պատնեշներ բարձրացնել՝ ներսից փոքր հրակնատներ թողնելով: Որոշ տեղերում, թշնամուն տեսնելու համար, կտրատում են խիտ անտառները: Նույնիսկ փոքրիկ տղաները՝ «թելեֆոնի տղաները», կապավոր են դառնում: Կանայք կազմակերպում են սնունդը, աղջիկներն ու հարսները ջուր են կրում՝ կռվողներին հասցնելու: Թշնամին քայլ առ քայլ մոտենում է մուսալեռցիների դիրքերին, բայց տարբեր կետերից բացված կրակը կատարյալ շրջապատման տպավորություն է ստեղծում, և թուրքերը սարսափահար փախչում են՝ թողնելով հարյուրավոր սպանվածներ:

Այդ հերոսամարտի ընթացքում տղամարդկանց հետ հավասար, իրենց նվիրվածությամբ և հերոսությամբ աչքի են ընկել նաև բազմաթիվ կանայք, այդ թվում՝ Մանուշակ Նաշալյանը, որի մասին երգ է հյուսվել.

Պարանը մեջքին կապել էր,
Հրացանը ուսից կախել էր,
Կացինը ձեռքը բռնել էր,
Մեծ-մեծ քարեր շրջում էր,
Կռվողներին օգնում էր,

Թշնամու ճամփան փակում էր,
Սրտի խորքից ասում էր.
«Գնդակս զուր թող չանցնի,
Թշնամու կուրծքը թող ծակի»[22]:

Մուսա լեռան վրա 40 օր համառ մարտեր են մղվում՝ Եսայի Յաղուբյանի, Պետրոս Դմլաքյանի և վերապատվելի Տիգրան Անդրեասյանի գլխավորությամբ: Այդ ընթացքում Քըզըլջայի, Քուզջըղազի, Դամլաջըքի և Ղափլան Դուզախի բարձունքներում չորս լուրջ ճակատամարտ է տեղի ունենում: Ըստ այդմ էլ՝ հյուսվել է ժողովրդական պատմական խրոխտ վիպերգը.

Մենք մուսալեռցի քաջ կտրիճներ ենք,
Բոլորս ալ վարժ զենք կրողներ ենք,
Թուրքը մեզ կուզե տեղահան անել,
Անապատներում մեզ բնաջնջել:

Մենք չենք կամենար լինել շանսատակ,
Մենք կուզենք թողնել մի լավ հիշատակ,
Փառքով մեռնելը մեզի պատիվ է,
Նահատակվելը ազգին պարծանք է:

…Լեռնցի ենք մենք՝ բոլորս ալ քաջ,
Մենք չենք խոնարհվի թշնամու առաջ,
Առյուծի նման կկռվենք քաջ-քաջ,
Ցիր ու ցան կանենք բանակը տաճկաց…

(Սվ., Վկ. 635, էջ 622):

Սակայն թշնամին նորանոր ուժեր է կենտրոնացնում ըմբոստ հայերին պատժելու համար: Մուսալեռցիների պարենն ու զինամթերքն սպառվում են: Հորդառատ անձրևն անօգտագործելի է դարձնում նրանց ունեցած երեք հարյուր որսորդական հրացանները: Լեռան ծովահայաց կողմից օգնություն ստանալու հույսով նրանք ճարահատյալ սպիտակ սավաններն իրար են միացնում՝ մեկի վրա գրում. «Քրիստոնյաները վտանգի մեջ են, փրկեցե՛ք», իսկ մյուսի վրա՝ Կարմիր խաչի նշան և պարզում լեռան լանջին:

Սեպտեմբերի 5-ին Միջերկրական ծովի խորքով անցնող ֆրանսիական «Կիշեն» ռազմանավը դանդաղեցնում է ընթացքը: Թիթեղյա արկղիկը վզին, մեջը անգլերեն

[22] *Նույն տեղում, Վկ. 163, էջ 129:*

գրված խնդրագրով, ծովն է նետվում 75-ամյա Մովսես Կրրկյանը: Նա լողալով հասնում է նավին, երեսը խաչակնքելով նավապետին է հանձնում նամակը: Սեպտեմբերի 14-ին ֆրանսիական «Ժաննա դ'Արկ» շոգենավը, անգլիական ռազմանավերի ուղեկցությամբ մոտենում է Մուսա լեռանը և, վերցնելով ավելի քան 4.200 մուսալեռցիների, փոխադրում է Պորտ Սայիդ, որտեղ նրանք պատսպարվում են բրեզենտյա վրանաքաղաքում:

Պորտ Սայիդում անցկացրած 4 տարիների ընթացքում մուսալեռցիներն իրենց ապրուստը հայթայթում են սանրագործությամբ, գդալագործությամբ, գորգագործությամբ, ասեղնագործությամբ և տոհմիկ այլ արհեստներով:

Վերապրողներն իրենց մանկության հուշերը պատմելիս հիշում էին, թե ինչպես իրենց մայրերն անապատի հրաշեկ ավազների վրա իրենց մատներով գրել են սովորեցրել մեսրոպյան տառերը, մինչև որ մի քանի վրանների տակ սկսել է գործել Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հիմնադրած Սիսվան վարժարանը՝ կից հիվանդանոցով ու որբանոցով:

Դեռևս 1915 թ. մայիսից Ուրֆայի (Եդեսիա) նոր մյութեսերիֆը (կառավարիչ)՝ իթթիհատական Ալի Հայդարը, կազմակերպել էր տեղի քառասուն երևելիների ձերբակալությունն ու բոլոր հայերից պահանջել քառասունութ ժամվա ընթացքում հանձնել զենքերը: Հուլիսի վերջին ձերբակալվել էր նաև Ուրֆայի հայ թեմի լուսավորյալ առաջնորդ Արտավազդ վրդ. Գալենտերյանը: Այդ օրերին Ուրֆա են հասնում իրենց քաջարի երիտասարդներից զրկված, աքսորյալ գեյթունցիների, նաև՝ Թուրքիայի տարբեր նահանգներից աքսորված թշվառ հայերի նորանոր քարավանները: Ուրֆայում բնակվող 35.000 հայերը որոշում են մուսալեռցիների պես զենքի դիմել:

Հոկտեմբեր ամսին կազմակերպվում է Ուրֆայի հերոսական ինքնապաշտպանությունը՝ Մկրտիչ Յոթնեղբայրյանի և Հարություն Ռաստկելենյանի գլխավորությամբ: Ոտքի է կանգնում Ուրֆայի ողջ հայությունը: Մանուկ ու ծեր, տղա ու աղջիկ, բոլորը մեկ մարդու նման ինքնամոռաց կռվում են 25 օր ու գիշեր: Հայոց թաղամասերը բաժանվում են վեց մարտական շրջանների, որտեղ տեղաբաշխված էին 800 մարտիկներ: Ուրֆացիները երդվում են. «Մենք պատրաստ ենք մեռնելու զենքը ձեռքներիս»[23]:

Սակայն թուրք ոստիկաններն ու խուժանն անցնում են նոր հարձակման. գրավում են հայ կաթոլիկ եկեղեցին: Ուրֆացիները թշնամուն թույլ են տալիս ներխուժել հայկական թաղամասը և, դարանակալելով, նրանց ոչնչացնում են: Ասելիք էր դարձել նրանց խիզախությունը.

Ուրֆան մեծ է՝ չի բաժանվի,

[23] *Ա. Ս ա հ ա կ յ ա ն. Դյուցազնական Ուրֆան և իր հայորդիները, Բեյրութ, 1955, էջ 818:*

Հիմքն ամուր է՝ չի փլվի,
Ուրֆայի կտրիճները
Ոչ մի տեղում չի գտնվի
(Սվ., Վկ. 638, էջ 623):

Հանդիպելով համառ դիմադրության՝ Ֆախրի փաշայի հրամանատարությամբ Ուրֆա է ուղարկվում 6.000 կանոնավոր զորք, որին միանում են 12.000 հրոսակներ: Ուրֆայի ինքնապաշտպանները զգալի կորուստներ են պատճառում թուրք ջարդարարներին: Կատաղած Ֆախրի փաշան մտահոգ ասում է. «Ի՞նչ կլինի մեր վիճակը, եթե այս ծանր օրերին մի քանի Ուրֆաներ մեր դեմ այսպես ծառանան»[24]:

Ուրֆայի հերոսամարտում ևս իրենց քաջագործություններով տղամարդկանց հետ աչքի են ընկել նաև կանայք և աղջիկները: Առանձնապես հիշարժան է Խարբերդի ամերիկյան կոլեջի շրջանավարտ Խանում Քեթենջյանը: Նրա քաջագործության մասին է պատմել թուրքական պահականոցի կոմիսար Յուսուֆ էֆենդին. «Քիչ վերջը շրջապատված էինք բոլորս ալ: Զիլ ու սուր ձայնով մեկը հրամայեց՝ «Անձնատո՛ւր ըլլալ»: Մենք՝ թուրքերս չպատասխանեցինք: Համազարկը կրկնվեցավ: Երրորդ համազարկին՝ ներսի և դուրսի լամպերը փշրվեցան: Հարձակվողները արդեն ներս խուժած էին: Քանի մը զենքեր ալ պայթեցան: Ժխոռը կավելնար: Մեկուն կը քաշկռտեին դեպի մզկիթին դուռը: Մարդուն պաղատելու ձայնեն ճանչցա, որ մեր Քալաբէօյնցի ոստիկան Ալին էր: Սիրտ ըրի նայելու թե՝ ինչ կընեն: Ադոտ լույսով տեսա, որ տաբատով, բայց կնոջական մազեր ունեցող մեկը պարանը կանցներ Ալիին վիզը: Զայն կախեցին լամպարին տեղը: Հրամայող ձայնը այդ կնոջ ձայնն էր, որ սկսավ անուններ տալ և համրեց 30-է ավելի կանանց անուններ, որոնք բոլորն ալ «Ներկա» պատասխանեցին կնոջական ձայներով: Անոնք բոլորն ալ տղամարդու լաթերով կիներ էին: Ստուգելե վերջ, որ ո՛չ սպանված ունեին և ո՛չ ալ վիրավոր, ամբողջը մեկեն երգելով հեռացան՝ առասպելական հերոսներու նման: Աս երբ միտքս ինա, ոսկորներս անգամ կսարսռան»[25]:

Ծնկից ծանր վիրավոր Մկրտիչ Յոթնեղբայրյանը պատգարակով դիրքից դիրք էր անցնում, ոգևորում կռվողներին: Ֆախրի փաշան նրա մոտ բանագնաց է ուղարկում գերմանացի գործարանատեր Մ. Էքարտին, ով նրան հորդորում է դադարեցնել կռիվը և հանձնվել: Սակայն հերոսական Ուրֆայի որդին պատասխանում է. «Եթե ձեր մեջ քաղաքակիրթ և քրիստոնյա մարդու զգացում կա՝ փրկեցեք անապատներուն մեջ կոտորվող անմեղ հայ ժողովուրդը»[26]:

---

[24] *Մ. Արզումանյան. Հայաստան. 1914–1917, Երևան, 1969, էջ 453:*
[25] *Մ. Ավետյան. նշվ. աշխ., էջ 329–330:*
[26] *Հուշամատյան Մեծ եղեռնի, էջ 804:*

Հայերի դրությունն օրըստօրե ծանրանում է: Հաջորդ օրն իսկ թշնամին ավելի է սեղմում Ուրֆայի պաշարման օղակը և հուժկու թնդանոթաձգությամբ ոչնչացնում հայկական թաղամասը: Հոկտեմբերի 23-ին, այդտեղ ներխուժելով, թուրքերը դաժան հաշվեհարդար են տեսնում անձնվեր հերոսների հետ: Իսկ մերձակա հայաբնակ Կարմունջ գյուղի կենդանի մնացած 800 ընտանիքներին քշում են Դեյր էլ Զոր և մեծ մասին անխնա կոտորում:

Պատմական այդ իրադարձությունների մասին են վկայել ուրֆացի վերապրողներ Խաչեր (ծնվ. 1893 թ.), Խորեն (ծնվ. 1893 թ.) և Նվարդ (ծնվ. 1903 թ.) Աբլապուտյաններն իրենց հուշերում (Սվ., Վկ. 143–145, էջ 300–305):

Անդրադառնալով պատմական իրադարձություններին՝ հարկ է նշել, որ դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի օրերին՝ 1916 թ., դաշնակից տերությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի ներքին պայմանավորվածությամբ (Սայքս-Պիկո), Թուրքիայի պարտության դեպքում, 2.600.000 հա մշակովի, բերքառատ հողեր ունեցող Կիլիկիան անցնելու էր Ֆրանսիայի հսկողությանը: Անգլիայի և Ֆրանսիայի իշխանությունները Փարիզի Ազգային պատվիրակության հետ նախապես համաձայնվել էին, որ եթե հայ կամավորները կռվեն գերմանաթուրքական զորքերի դեմ, հաղթանակից հետո հայերին կտրվեն քաղաքական լայն հնարավորություններ, և հայ կամավորները կդառնան նորակազմ Ինքնավար Հայկական Կիլիկիայի քաղաքապահ զինվորներ:

Ուստի, թուրքական բանակից, աքսորի ճամփաներից ու տարբեր վայրերից, նույնիսկ հեռավոր Ամերիկայից ժամանած հայ երիտասարդները (մուսալեռցի, այնթապցի, մարաշցի, քեսաբցի, հաճընցի, հյուսեյնիկցի, չնգուշցի, սեբաստացի, խարբերդցի, արաբկիրցի և այլն) զինվորագրվում են ֆրանսիական բանակին՝ ստեղծելով Արևելյան (Հայկական) լեգեոնը: Հայ կամավորներն իրենց անմեղ նահատակ հարազատների վրեժով լցված, արհամարհելով մահը, պարտության են մատնում թուրք-գերմանական զորքերին՝ նվաճելով Արարայի փայլուն հաղթանակը Նաբլուսի՝ Պաղեստինի մոտ: Պատմական այդ իրադարձություններն իրենց գեղարվեստական արտացոլումն են գտել նաև ժողովրդական երգերի մեջ.

Մեկիկ-մեկիկ հաշվեցի չորս տարին,
Հայ կամավորները Նաբլուսը գրավեցին.
Հայերը հազար հինգ հարյուր հոգի էին.
Անգլիացիք, ֆրանսիացիք ապշեցին

(Սվ., Վկ. 545, էջ 599):

Հայ քաջարի լեգեոնականներն արժանանում են ֆրանսիական և բրիտանական հրամանատարության դրվատանքին: Գեներալ Ալենբին, 1918 թ. հոկտեմբերի 12-ին, Փարիզի Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարին հղած հե-

ռագրում գրել է. «Ես հպարտ եմ իմ հրամանատարության տակ հայկական զորամաս ունենալուս համար: Նրանք կռվեցան փայլուն կերպով, և մեծ բաժին մը ունեցան հաղթանակի մեջ»[27]:

Երբ երիտթուրքերի իշխանությունը տապալվեց, նրանց գործունեությունն ընդհանրապես և հակահայկական ոճրագործությունները մասնավորապես դատապարտվեցին ինչպես Թուրքիայում, այնպես և ողջ աշխարհում: Անտանտի տերություններին ենթակա Թուրքիայի նոր իշխանավորները մահվան դատապարտեցին երիտթուրք ղեկավարներին:

Պատերազմից հետո՝ 1920 թ. կնքված Սևրի պայմանագրով Կիլիկիայի վրա հաստատվելու էր Անտանտի երկրների հսկողությունը, և թուրքական զորքերն էլ դուրս էին բերվելու Կիլիկիայից: Դեյր էլ Զորի, Ռաս ուլ Այնի և այլ կենդանի գերեզմանոցներից հրաշքով փրկված, ուժասպառ, հյուծված և ունեզրկված հայ աքսորականներն աստիճանաբար գալիս, տեղավորվում էին Կիլիկիայում: Նրանք, ապագայի նկատմամբ վառ հույսով ու հավատքով, սկսում են վերականգնել ավերվածը, մշակել խոպանացած այգիները: Սակայն թուրքերին հաջողվում է լեզու գտնել դաշնակից տերությունների հետ և ստիպել ֆրանսիացիներին՝ իրենց խաղաղապահ զորքերը դուրս բերել Կիլիկիայից:

Չճանաչելով Սևրի պայմանագիրը և օգտվելով ֆրանսիական զինվորական վարչության անվճռականությունից ու թուլությունից՝ թուրքական զորքերը և տեղի հրոսակներն իրենց զենքն ուղղում են Կիլիկիայի հայության դեմ: Ֆրանսիական զինվորական վարչությունը ոչ միայն լուրջ միջոցներ չի ձեռնարկում հայերի անվտանգությունն ապահովելու ուղղությամբ, այլև տեղերում իշխանությունը թողնում է թուրք զինվորական պաշտոնյաների ձեռքին, և նրանք չեն զինաթափվում:

1920 թ. հունվարից քեմալաթուրքական զորքերը գրոհում են Կիլիկիայի հայկական բնակավայրերը: 22 օր տևող կատաղի մարտերում Մարաշի հայերը կոտորվում են, իսկ քաղաքը՝ մոխրացվում: Պատմական այդ սահմռկեցուցիչ իրադարձությունների անմիջական տպավորությունների տակ է հորինվել ժողովրդական սեղմ, բայց պատկերավոր երգը.

Ավա՛ղ, Մարաշին Մարաշ են ասում,
Մարա՛շ, քեզ ինչպե՞ս են Մարաշ ասում,
Երբ քո մեջ եկեղեցի են հրկիզում,
Եկեղեցու մեջ՝ հայեր մոխրացնում
(Սվ., Վկ. 550, էջ 600):

[27] *Մ. Քելեշյան. Սիս-Մատյան, Բեյրութ, 1949, էջ 592:*

Մարաշցի ականատես–վկա Վերգինե Մայիկյանը (ծնվ. 1898 թ.) իր պատմած հուշերում անդրադառնում է նաև այդ ժամանակվա քաղաքական իրադարձություններին, որոնք հուսախաբ արեցին հայերին. «… Մեր խաղաղ կյանքը տևեց 1918–1920 թիվը, քանի դեռ ֆրանսիական իշխանությունը Կիլիկիայումն էր: Ֆրանսիական ու հայկական թերթերը միշտ գրում էին, որ Ֆրանսիան հավիտյան Կիլիկիայում կմնա, որովհետև Ֆրանսիայի հեղինակությունն Առաջին համաշխարհային պատերազմեն վերջը բարձրացել էր, իսկ Թուրքիայինը՝ ընդհակառակը: Բայց այդ խաղաղությունը, ափսո՛ս, երկար չտևեց: Կամաց-կամաց զգացինք, որ թուրքերը կսկսին ատել մեզի: Օր մըն ալ ելանք, որ ֆրանսիացիները իրենց ձիերուն սմբակներուն տակը քեչե (թաղիք – թուրք.) կապեր են և սուս ու փուս հեռացեր են Մարաշեն: Առտուն էլանք, զարմացանք, քանի որ ոչ ոք լուր չուներ այդ մասին: Նույնիսկ հայտնի Հակոբ աղա Խրլաքյանին անգամ, որ ամբողջ ֆրանսիական բանակին պարենը ձրի ինքն էր մատակարարում, ժեներալ Դյումոնը ոչինչ չէր հայտնել իրենց հեռանալու մասին: Այնպես որ, 1920-ի սեպտեմբերին ֆրանսիական զորքն այլևս Մարաշում չէր: Թուրքերը երևի առաջվնե լուր ունեին, քանի որ գիշերները հրացաններ կպայթեին այս ու այն կողմը, կվախցնեին մեզի…» (Սվ., Վկ. 259, էջ 460):

Մարաշի կոտորածին զոհ է դառնում շուրջ 13.000 հայ: Այնուհետև ողջ մնացած 8.000 մարաշցիներ, Ուրֆայի 6.000 հայ բնակչության հետ, հարկադրված բռնում են գաղթի ճամփան՝ դեպի Հալեպ, Դամասկոս, Բեյրութ, Երուսաղեմ, Բաղդադ և Անատոլիայի հունական շրջաններ:

1920 թ. ապրիլի 1-ին քեմալականները պաշարում են Այնթապը: Պատերազմի ավարտից և զինադադարից հետո այնտեղ վերաբնակված շուրջ 10.000 այնթապցիների և 8.000 սեբաստացի հայ գաղթականների հազիվ խաղաղված կյանքը նորից է փոթորկվում: Այնթապի հայերը դիմում են ինքնապաշտպանության: Տեղում Ազգային միությանը կից ստեղծվում է Զինվորական կենտրոնական մարմին՝ Ադուր Լևոնյանի գլխավորությամբ: Վերջինս հաշվառման է ենթարկում եղած 750 կռվողների զենքն ու զինամթերքը և կազմակերպում ռումբեր պատրաստելու գործը:

Ականատես վերապրող Սանդուխտ Հեքիմյանը (ծնվ. 1908 թ., Այնթապ) այդ պատմական իրադարձությունների մասին վկայել է. «1920 թ. Ալի Քըլըջն ահռելի զորքով հարձակվեց Այնթապի վրա: Այնթապի ինքնապաշտպանության ղեկավարն էր Ադուր Լևոնյանը: Ան այնթապցիներու կերակուրի պղինձներն անգամ հալեցնել տվավ, որ բոմբաներ շինեն: Ան իր կամավորներով հարձակվեցավ թշնամու վրա և դուրս եկավ պաշարումեն: Ալի Քըլըջի 24.000-ի հասնող զորքը մեկ գիշերվա մեջ սարսափահար ետ փախավ՝ «Գյավուրըն գէօզիւ քան դօլդու» (Հայու աչքն արյուն լցվեց – թուրք.) գոռալով, որը կնշանակե՝ հայերը վրեժով լցվեցին: Մեր Այնթապում Ադուր Լևոնյանի վրա երգ էին հանել…» (Սվ., Վկ. 269, էջ 468):

Հետագայում նույն ականատես–վկա վերապրողի որդին՝ Գևորգ Հեքիմյանը (ծնվ. 1937 թ., Բեյրութ), երգել է իր մորից լսած այս երգը.

Ադու՛ր իշխան, ծառս եղի՛ր,
Ջահիդ կրակը վառի՛ր,
Թուրքերը գրոհում են՝
Կամավորներով արշավի՛ր
(Սվ., Վկ. 641, էջ 625):

Այդ ընթացքում Կիլիկիայի գրավման ընդհանուր հրամանատար Գոզան օղլու Դողան բեյն իր բազմահազարանոց զորքով պաշարում է Հաճընն քաղաքը, որի 35.000 հայ բնակիչներից Մեծ եղեռնից փրկվել էին միայն 6.000:

Թշնամու կարծիքով «Կիլիկիո հայկական միջնաբերդը՝ Հաճընը, հիմնովին կործանելն ու բնաջնջելը մեկ ժամվա գործ էր և աննշան հարձակումով մը պիտի կրնան թաղել 6.000 հայությունը»[28]: Սակայն հաճընցիները լի էին վճռականությամբ: Նրանք իրենց կառավարիչ փաստաբան Կարապետ Չալյանի ղեկավարությամբ կազմում են Հաճընի ինքնապաշտպանության բարձրագույն խորհուրդը: Պաշտպանության հրամանատար են ընտրում Զորավար Անդրանիկի զինակից սպա Սարգիս Ճեպեճյանին: Կազմակերպում են 4 վաշտ, 60 հեծյալից բաղկացած էսկադրոն: Հաճընն ու իր շրջակայքը բաժանում են պաշտպանական 4 շրջանների: Փորում են խրամատներ, մարտական տրամադրությունը համակում է բոլորին:

Զենքի խիստ կարիք զգացող հաճընցիներն անհամբերությամբ սպասում էին Ադանայի Ազգային միության միջոցով դրսից ակնկալվող օգնությանը, որի շնորհիվ ոչ միայն զենք ու զինամթերք, այլև կռվող նոր ուժեր պիտի հասնեին: Սակայն ոչ մի օգնություն չի հասցվում, և հաճընցիների վիճակը դառնում է անհուսալի, քանի որ ֆրանսիական զինվորական բարձրաստիճան ներկայացուցիչները վարում էին երկդիմի քաղաքականություն: Թեպետ նրանք խոստացել էին ինքնապաշտպանության համար տրամադրել սննդամթերք, զենք ու զինամթերք, սակայն իրենց խոստումը ոչ միայն չեն հարգում, այլև թուրքերին տեղեկացնում են հայերի ինքնապաշտպանության կազմակերպման մասին: Հաճընցի ազատամարտիկները մեծ դժվարությամբ գրավում են թշնամու թնդանոթը, սակայն արկեր չեն գտնվում, որ կրակեն ու պաշտպանվեն: Սովը նեղում է հաճընցիներին. «Ժողովուրդը կստիպվի ուտել կատու, մուկ, շուն, կաշի, ծառի կեղև, տրեխ»[29]:

Թշնամին նորանոր թնդանոթներով ու անհամար կանոնավոր զորքով համալրում է իր ուժերը: Ութամսյա երկարատև ու համառ դիմադրությունից հետո թուր-

[28] *Ս. Յ. Թ ե ր զ ի ա ն . Հաճընի ութամսյա դյուցազնամարտը, Բուենոս-Այրես, 1956, էջ 241:*
[29] *Ա ր ա մ Ա ս պ ե տ . Դրվագներ Հաճընո հերոսամարտեն, Բեյրութ, 1961, էջ 242:*

քերին հաջողվում է հրետանու խաչաձև կրակոցների հեղեղով ավերել ու հրկիզել Հաճընի քարաշեն տները: Հարյուրավոր քաջարի մարտիկներ ընկնում են դիրքերում, հազարավոր հաճընցիներ անխնա կոտորվում են: Միայն 380 հոգու է հաջողվում կռվելով ճեղքել թշնամու պաշարման շղթան և դուրս գալ ահավոր հրդեհի շրջափակումից.

Երեք հարյուր հայ քաջերով,
Բոլոր զինված մոսիններով,
Դողան բեյին մենք ջարդ տալով,
Հաճընն ինկավ՝ «Վրե՛ժ» գոռալով
(Սվ., Վկ. 649, էջ 628):

«Վրե՛ժ» գոռալով ընկնում են նաև ընդհատումներով 314 օր հերոսաբար դիմադրած Այնթապը, հինավուրց քաղաքամայր Սիսը, պատմական անցյալ ունեցող Տարսոնը, առևտրի կենտրոն Ադանան և հայերով բնակեցված Կիլիկիայի այլևայլ բնակավայրեր: Անգլիայի հրահանգով, ֆրանսիական կառավարությունը, դրժելով իր դաշնակցային պարտավորությունները հայերի նկատմամբ, 1921 թ. հոկտեմբերի 20-ին, Անկարայում կնքված պայմանագրով, Կիլիկիան հանձնում է թուրքերին՝ կոտորածի վտանգի մատնելով տեղի հայությանը:

Մինչդեռ արծվաբույն Զեյթունը, որի 30.000 կայտառ ու շեն բնակիչներից միայն 1.058 էր Հայոց ցեղասպանությունից մազապուրծ վերադարձել ու հազիվ սկսել վերականգնել ավերվածն ու հրկիզվածը, ազգային հերոս Արամ Չոլաքյանի գլխավորությամբ ու նրա զինակիցներ Հովհաննես Սիմոնյանի, Կարապետի, Մանուկի և այլ կտրիճների հետ միանում են Ամանոսի անմատչելի լեռներում կռվող հասանբեյցի (Ադանա) Ավետիսի հերոսների խմբին: Հետզհետե ստվարացող՝ 500-ի հասնող այր ու կին քաջերի այդ հսկա խումբը, Տավրոսի անանցանելի լեռներում, ինչպես Ագդաղի հերոսները Պոնտոսի լեռներում, զենքը ձեռքներին գիշեր-ցերեկ կռվելով, ահ ու սարսափի են մատնում շրջակա թուրք գյուղերը և թեպետ հետապնդվում են ասկյարներից, սակայն, անասելի դժվարություններ հաղթահարելով, շարունակում են մարտնչել թուրքական զորքերի դեմ՝ հույս ունենալով փրկել իրենց նախնիների օրրանը՝ երբեմնի շենշող Կիլիկիան:

Այդ ժամանակ է, որ Հայոց ցեղասպանության միլիոնավոր զոհերի վրեժը լուծեց ազգային հերոս Սողոմոն Թեհլիրյանը՝ Բեռլինում սպանելով փախուստի մեջ գտնվող մեծ ոճրագործ Թալեաթ փաշային: 1921 թ. հունիսի 2–3-ին Բեռլինի շրջանային դատարանն արդարացրեց հայ վրիժառուին, քանի որ նա ի կատար էր ածել թուրքական տրիբունալի կայացրած մահավճիռը:

Հայ ժողովուրդն այդ ցնցող իրադարձությանը ևս բանաստեղծական շունչ է հաղորդել.

Թալեաթ փաշան փախավ Բեռլին,
Թեհլիրյանը հասավ ետին,
Զարկավ ճակտին՝ փռեց գետնին.
Գինի լի՛ց, ախպեր ջա՛ն,
Գինի լի՛ց, խմողաց անու՛շ:

Թալեաթ փաշան դրին հողը,
Լուրը դրկին ցնկած մորը,
Կեցցե՛ գերման դատավորը.
Գինի լի՛ց, ախպեր ջա՛ն,
Գինի լի՛ց, խմողաց անու՛շ
(Սվ., Վկ. 650, էջ 628):

Թեպետ «գերման դատավոր»-ները, ըմբռնումով մոտեցան և արդարացրին հայ վրիժառուին, սակայն դրանով չբարելավվեց արևմտահայության վիճակը:

Ավելին, 1921 թ. Կիլիկիայի հայության պարպումից հետո հերթը հասել էր Անատոլիայի հայերին, որոնց մեծ մասն արդեն Եղեռնի ժամանակ անխնա կոտորվել էր, իսկ հրաշքով փրկվածներն իրենց գոյությունը շարունակում էին հունական գերիշխանության տակ գտնվող որոշ հայաբնակ վայրերում և հատկապես նավահանգիստ Զմյուռնիայում (Իզմիր):

1922 թ. քեմալականները հրո ճարակ են դարձնում նաև Զմյուռնիայի հայկական և հունական թաղամասերը՝ քրիստոնյաներին քշելով ծովափ: Այդ սահմռկեցուցիչ իրադարձությունը ժողովրդի հիշողության մեջ մնացել է որպես «Իզմիրի աղետ»: Հուզումով վերհիշելով այդ ահավոր տեսարանները, աֆիոնգարահիսարցի վերապրող Արփինե Բարթիկյանը (ծնվ. 1903 թ.) ևս վկայել է իր տեսածները. «… Մեյ մըն ալ սկսավ միլլիական (ազգայնական – թուրք.) շարժումը: Իզմիրը կրակի տվին: Առաջին կրակը Հայնոցը տվին: Ս. Ստեփանոս եկեղեցին այրեցին: Քանի որ բոլոր հայերը այդ եկեղեցին մտած էին, որ պաշտպանվեն: Վերջը հայերս փախանք, գնացինք ծովեզերք: Ծովին վրա լի՛քը նավակներ էին, բայց թուրքերը նախօրոք բոլոր նավակները ծակել էին, որ ջուրը լցվի ու հայերը չկրնան ազատվիլ: Խեղճ հայերը նավակ էին նստում, քիչ մը կլոդար նավակը, վերջը՝ լը՛կ-լը՛կ, ջուրը կլեցվեր մեջը, բոլորը ծովի մեջ շուռ կուգային: Ծովի վրա լի՛քը ուռած մարմիններ էին…» (Սվ., Վկ. 195, էջ 392):

Դրությունն օրհասական էր ու անել. ետևը՝ հուր, առաջը՝ ջուր: Թոհուբոհի այդ գեհենից ազատվում էին միայն նրանք, ովքեր իրենց վերջին ոսկեդրամներն ու զարդերը տալիս էին թուրքերին՝ իրենց կյանքը փրկելու համար, իսկ նրանք, ովքեր ոչ մի միջոց չունեին, արհամարհելով մահը, նետվում էին ծովի հուժկու ալիք-

ների մեջ՝ լողալով հասնելու հեռվում խարիսխ գցած եվրոպական դրոշներ կրող շոգենավերին, որոնք հայ անտուններին տանելու էին ուր որ պատահեր.

…Անկե փախանք Հունաստան,
Շատ շատերն ալ՝ Ֆրանսա,
Մեկալները՝ Եգիպտոս.
Սապես ցրվանք ամե՛ն կողմ
(Սվ., Վկ. 564, էջ 606):

Եվ ստեղծվեց Հայ սփյուռքը որպես պատմական իրողություն:

Այսպիսով, թեպետ թուրքական կառավարությունը Հայոց ցեղասպանության ընթացքում (1915–1923 թթ.) դաժանորեն ճնշում էր կայսրության տարբեր վայրերում ծայր առած արևմտահայերի երկու տասնյակից ավելի դիմադրողական-ինքնապաշտպանական հերոսամարտերը, սակայն իրենց մարդկային ապրելու տարրական իրավունքի և ազգի ֆիզիկական գոյության համար մարտնչող անձնուրաց հայ հերոսները փայլուն հետք թողեցին հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ, որոնց մասին վկայել են նաև ականատես վերապրողները:

Ի մի բերելով վերը շարադրված նյութը՝ կարելի է հանգել մի շարք եզրակացությունների, որոնք բացառում են հայ ժողովրդի «ոչխարի նման զոհվելը».

– Առաջին աշխարհամարտի հենց սկզբից (1914 թ.) երիտթուրք կառավարությունը հավաքել էր հայերի զենքերը, ընդհուպ մինչև՝ խոհանոցի դանակները: Հայերը զինաթափված էին և գոյամարտերի ընթացքում թուրքական զինված բանակների դեմ կռվում էին ինքնաշեն զենքերով,

– կառավարությունը թուրքական բանակ էր զորակոչել 17–45 տարեկան հայ երիտասարդներին, որոնց աչքից հեռու վայրերում դաժանորեն ոչնչացրել էին, ուստի գոյամարտող տարրը թուլացել էր,

– կառավարությունը հավաքել և անապատներում քարերով փշրել էր հայ բազմաշնորհ մտավորականների գանգերը, որպեսզի արևմտահայերը զրկվեն ոչ միայն ռազմունակ ուժից, այլև՝ ղեկավար մտքից,

– հայ ժողովուրդը երբեք նախահարձակ չի եղել, սակայն, երբ իր նկատմամբ անարդարություն և բռնություն է կիրառվել՝ արժանին հատուցել է,

– հայերի գոյամարտերն իրականացվել են միմյանցից անջատ, իրարից կտրված,

– հայը թշնամու նկատմամբ եղել է անաչառ, սակայն անզեն բնակչության՝ կանանց, երեխաների և ծերերի հանդեպ՝ մարդկային,

– հայ ժողովուրդն ունեցել է բազմապիսի կորուստներ (մարդկային, նյութական, մշակութային, տարածքային և այլն): Նրա նպատակն է եղել ապրել խաղաղ ու ստեղծագործ կյանքով իր հազարամյա բնօրրանում,

– հայ ժողովուրդն իր դիմադրողական-ինքնապաշտպանական գոյամարտերի ընթացքում մշտապես եղել է մենակ, անօգնական, հաճախ նաև դավաճանված՝ իր անմնացորդ նվիրվածության դիմաց: Մեծ տերությունները դիտորդի դերում են եղել և ուշացած սոսկ մարդասիրական ու որբախնամ օգնություն են ցուցաբերել:

Այնինչ, երբ հայ ժողովուրդը միասնաբար բռունցքվել է, Սարդարապատի հերոսական ճակատամարտով կարողացել է վերականգնել 600 տարվա կորցրած իր պետականությունը: Ապա, երբ հույսը դրել է ժողովրդի համազգային ոգու վրա, ազատագրել է բռնազավթված Արցախը, որը մեր ազգային պահանջատիրության առաջին հաղթական հանգրվանն է… Ուստի, տեղին է հիշել հաղթանակի ժողովրդական աղոթքը.

Տե՛ր, դուն պահե միշտ անսասան
Դյուցազնական Մայր Հայաստան,
Տուր հարատև խաղաղություն,
Կյանք ու արև, ազատություն,
Հայ դրոշով մեր պետական
Թող միշտ ապրի ազգն հայկական
Ամեն[30]:

САМООБОРОНИТЕЛЬНЫЕ БОИ ЗАПАДНЫХ АРМЯН ЗА ВЫЖИВАНИЕ В ГОДЫ ГЕНОЦИДА (1915–1923 гг.), ПО СВИДЕТЕЛЬСТВАМ ОЧЕВИДЦЕВ

ВЕРЖИНЕ СВАЗЛЯН

Резюме

Накануне Геноцида армян организованные по особому плану младотурецкого государства мобилизация и сбор оружия у армянской молодежи, ее массовое истребление и последующее изгнание всего западноармянского населения из родной колыбели, депортация в сирийские пустыни и резня стали причиной самооборонительных сражений в различных местностях страны (Акдаг-Йозгат, Шатах, Ван, Муш, Сасун, Шапин-Карахисар, Муса Даг, Урфа, Мараш, Айнтап, Аджн и др.). Хотя турецкое правительство жестоко подавляло героическое сопротивление армян, но самоотверженные армянские герои, боровшиеся за элементарное право своего народа на жизнь, за справедливость, оста-

[30] *Վ. Սվազլյան. Կիլիկիա. …, Վկ. 1391, էջ 250:*

вили яркий след в истории национально-освободительной борьбы армянского народа. Эти героические события нашли отражение в воспоминаниях и исторических песнях свидетелей очевидцев Геноцида армян.

THE SELF-DEFENSIVE BATTLES OF THE WESTERN ARMENIANS FOR SURVIVAL DURING THE YEARS OF THE GENOCIDE (1915–1923) ACCORDING TO THE TESTIMONIES OF THE EYEWITNESS SURVIVORS

VERZHINE SVAZLYAN

Summary

The mobilization and the arm-collection of the Armenian youth according to a special plan devised by the Young-Turks government on the eve of the Armenian Genocide and the mass extermination of these youth, followed by the forced exile of the entire Western Armenian population from its native cradle, deportation to the Syrian deserts, its annihilation and holocaust by brutal means impelled the Western Armenians to wage self-defensive struggles for survival in the various localities of the country (Akdagh-Yozghat, Shatakh, Van, Moush, Sassoun, Shapin-Garahissar, Moussa Dagh, Urfa, Marash, Ayntap, Hadjn and other places). Although the Turkish government cruelly suppressed the heroic resistance and the self-defensive battles for survival of the Western Armenians, nevertheless the devoted Armenian heroes, who struggled for their elementary human rights, for justice, for the physical survival and honorable life of their nation, recorded brilliant pages in the history of the national liberation struggle of the Armenian people. These heroic events are reflected in the memoir-testimonies and historical song-testimonies of the eyewitness survivors of the Armenian Genocide.